1999, ՄԱՐՏ Բ, ԹԻՎ 6 (50)

# Քրիստոնեայ ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

*«ՀՌՈՄ-ՀԱՅԱՍՏԱՆ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՈՒՄԸ*

*ԱՎԱԳ ՇԱԲԱԹ*

*«ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ 50-ՐԴ ՀԱՄԱՐԸ*

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՅՑԸ ՎԱՏԻԿԱՆ

### *«ՀՌՈՄ-ՀԱՅԱՍՏԱՆ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՈՒՄԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ, ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՒ ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

1999 թվականի մարտի 24-ին Վատիկանի թանգարանի Սիքստինյան սրահում բացվեց Հայոց մկրտության 1700-ամյակին նվիրված «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսը:

Այս առիթով, հակառակ իր առողջական վիճակին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մարտի 23-ին Լոնդոնից ժամանեց Հռոմ՝ Մայր Աթոռի բարերար եւ ցուցահանդեսի գլխավոր հովանավոր Վաչե Մանուկյանի անձնական ինքնաթիռով՝ ուղեկցությամբ գավազանակիր Տ. Խորեն աբղ. Հովհաննիսյանի: Տերտերյանը, Տ. Մուշեղ եպս. Մարտիրոսյանը (Լոս Անջելես), Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի լուսարարապետ Տ. Նուրհան ծ. վրդ. Մանուկյանը, Տ. Պարթեւ աբղ. Գյուլումյանը (Հռոմ) եւ Միլանի հայոց հոգեւոր հովիվ Տ. Սարգիս քհն. Սարգիսյանը:

Մարտի 24-ի առավոտյան ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պետական պատվիրակության հետ Հայաստանից Հռոմ ժամանեցին նաեւ Վեհափառ Հայրապետի շքախմբի մյուս անդամները՝ կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ եւ Արա-



Հռոմի «Շամպինո» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Վատիկանի Քրիստոնեական միության խորհրդի նախագահ կարդինալ Էդուարդ Կասսիդին, Վատիկանի մոտ ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը, Իտալիայում ՀՀ հավատարմատար Գագիկ Բաղդասարյանը, որից հետո նա առաջնորդվեց Վատիկանի «Ս. Մարթա» հյուրանոց:

Վեհափառ Հայրապետի շքախմբին մաս կազմելու համար Հռոմ էին ժամանել նաեւ Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Կիլիկիո կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Արտավազդ արքեպս. Թրթռյանը, Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանը, 1700-ամյակի տոնակատարության գրասենյակի վարիչ-տնօրեն Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. րատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ եպս. Մարտիրոսյանը, Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռաֆայել Պապայանը:

Նույն օրը՝ երեկոյան ժամը 17.30-ին, Վատիկանի առաքելական գրադարանի գահասրահում տեղի ունեցավ ցուցահանդեսի պաշտոնական բացումը՝ նախագահությամբ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի եւ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի: Պաշտոնական բացման արարողությունից առաջ տեղի էր ունեցել Հռոմի Պապի, Վեհափառ Հայրապետի եւ ՀՀ նախագահի առաջին կարճ հանդիպումը:

Պաշտոնական բացման արարողությանը, Վեհափառ Հայրապետի եւ ՀՀ նախագահի շքախմբի անդամներից բացի, ներկա էին Վատիկանի պետական քարտուղար կարդինալ Անջելո Սոդանոն, Արեւելյան Կաթոլիկ Եկեղեցիների բաժնի նախագահ կարդինալ Աքիլլե Սիլվեստրինին, Քրիստոնեական միության քահանայապետական խորհրդի նախագահ կարդինալ Էդուարդ Կասսիդին, Վատիկանի առաքելական գրադարանի պատվավոր տնօրեն կարդինալ Լուիջի Պոջջին, Վատիկանի պետական քարտուղարի փոխանորդ Ջիովաննի Բատիստա Ռե արքեպիսկոպոսը, Վատիկանի միջպետական հարաբերությունների բաժնի վարիչ Ժան-Լուի Թորան արքեպիսկոպոսը, Վատիկանի առաքելական գրադարանի տնօրեն Խորխե Մարիա Մեջիա արքեպիսկոպոսը, Քրիստոնեական միության քահանայապետական խորհրդի քարտուղար Պիեռ Դյուպրե եպիսկոպոսը, բազմաթիվ այլ արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ, Վատիկանում հավատարմագրված դիվանագետներ, գիտնականներ, դասախոսներ, արվեստագետներ, սփյուռքահայ հայտնի դեմքեր:

Պաշտոնական բացման արարողության սկզբում ելույթ ունեցավ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, որը շեշտեց հայ քրիստոնեական մշակույթի համամարդկային արժեքը եւ գոհունակություն հայտնեց Հայաստանի Հանրապետության ու Վատիկանի հետզհետե խորացող կապերի համար, որի արտահայտությունն էր ներկա ցուցահանդեսը:

Վեհափառ Հայրապետն իր ճառում, որն ընթերցեց Խաժակ սրբազանը, իր գնծությունը հայտնեց այս սքանչելի իրադարձության համար, որին ինքը չէր կարող չմասնակցել: Վեհափառն ի մասնավորի շնորհակալություն հայտնեց հովանավոր Վաչե Մանուկյանին եւ ցուցահանդեսի կազմակերպիչ Կլոդ Մութաֆյանին: «Հայոց դարձի վավերական բնույթն իրապես «տիեզերական» է... այն խոսում է ողջ բնակեցված երկրի բոլոր ժողովուրդներին»,- շեշտեց Վեհափառ Հայրապետը:

«Միասնաբար Քրիստոսի ոտնահետքերով. թող այս լինի բոլոր քրիստոնյաների հույսն ու աղոթքը երրորդ հազարամյակի եւ Հայաստանի մկրտության 1700-ամյակի արշալույսին»,- հայտարարեց Հռոմի Պապն իր խոսքում՝ շեշտելով քրիստոնեական աշխարհում հայոց ներդրումի անուրանալի արժեքը:

*Շարունակությունը՝ էջ 2*

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ



Մարտի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը շուրջ վեց ամսվա բացակայությունից հետո վերադարձավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին:

Երեկոյան՝ ժամը 6.30-ին Լոնդոնից ժամանած հատուկ ինքնաթիռը վայրէջք կատարեց Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, Տ. Խորեն արղ. Հովհաննիսյանը, Տ. Բագրատ արղ. Գալստյանը, Նորին Սրբության անձնական բժիշկ Րաֆֆի Հովհաննիսյանը, Վեհափառ Հայրապետի քույրը:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, մշակույթի նախարար Ռոլանդ Շառոյանը, ՀՀ կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Լազար Մուջյանը, այլ պաշտոնյաներ: Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել, կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանի գլխավորությամբ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բոլոր թեմակալ առաջնորդները, Մայր Աթոռի միաբանության անդամներ:

«Փառք եւ գոհություն եմ տալիս Աստծուն, որ շնորհ արեց ինձ վերադառնալու իմ հայրենիք՝ Հայաստան եւ հոգեւոր տուն՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին:

Թեւ տակավին չեմ վերագտել իմ առողջությունը, բայց ցանկանալով ցանկացա ապաքինման շրջանն անցկացնել իմ հարազատ տան մեջ», - օդանավակայանում կարճատեւ դադարի ընթացքում Վեհափառ Հայրապետի խոսքն ընթերցեց Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Վեհափառ Հայրապետը հայրապետական խոսքում իր գնահատանքը եւ շնորհակալությունն էր հայտնում բոլոր նրանց, ովքեր աղոթեցին ու բարի մաղթանքներ ցանկացան Նորին Սրբության առողջության վերականգնման համար:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը շքախմբով ուղեւորվեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածին:

Ամենայն Հայոց կաթողիկոսին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում դիմավորեցին հոգեւոր դասը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները, ճեմարանի սաներն ու հավատացյալների բազմությունը՝ Մայր տաճարի զանգերի ղողանջներով եւ սաղմոսների երգեցողությամբ:

Մայր տաճարում Վեհափառ Հայրապետը կանգ առավ Իջման Ս. Սեղանի առջեւ եւ ծնկաչոք համբուրեց Սուրբ Խաչը: Ապա Վեհափառ Հայրապետի վերադարձը Հայոց հոգեւոր կենտրոն՝ ջերմ խոսքերով ողջունեց կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը, որ Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ՝ Մայր Աթոռում կշարունակի կատարել կաթողիկոսական ընդհանուր փոխանորդի պարտականությունները:

Մայր տաճարում կանոնական աղոթքից հետո Ամենայն Հայոց կաթողիկոսի հայրապետական խոսքն ընթերցեց Խաժակ սրբազանը. «Ամենախոր իղձս էր լինել իմ ու ամբողջ հայ ժողովրդի հոգեւոր տան՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում եւ այստեղ անցկացնել ապաքինման ընթացքը՝ միասին տոնելով մահվան վրա Քրիստոսի տարած հաղթանակը՝ Սբ. Հարության տոնը»: Վեհափառ Հայրապետի խոսքում երախտագիտությամբ հիշատակված էին բոլոր նրանք՝ «ՀՀ վսեմաշուք նախագահ պրն. Ռոբերտ Քոչարյանից մինչեւ ամենապարզ քաղաքացին», ովքեր անցնող ամիսներին մշտապես կապի մեջ են եղել բուժման շրջանում գտնվող Հայոց կաթողիկոսի հետ, հոգով ու աղոթքներով սատար եղել նրան: Վեհափառ Հայրապետը հատուկ գնահատանքով արտահայտվեց կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանի եւ Խաժակ արք. Պարսամյանի աշխատանքի վերաբերյալ, անվանապես հիշատակեց բոլոր նրանց, ովքեր այս շրջանում «պարտականության խորը գիտակցությամբ» շարունակեցին իրենց նվիրյալ ծառայությունը մեր Մայր Եկեղեցում:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*

# ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՅՑԵԼԵՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

## *ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ*

Մարտի 12-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանը Նյու Յորքում այցելեց Ամերիկայի հայոց Արեւելյան թեմի առաջնորդարան՝ ԼՂՀ արտաքին գործերի նախարար Նաիրա Մելքումյանի, ՄԱԿ-ում Հայաստանի մշտական եւ լիազոր դեսպան Մովսես Աբելյանի, Վաշինգտոնում ԼՂՀ ներկայացուցիչ Թեւան Պողոսյանի եւ այլ պաշտոնական անձանց ընկերակցությամբ: Այս մասին տեղեկացնում է Արեւելյան թեմի առաջնորդարանի դիվանը:

Նախագահն իր շքախմբով նախ մուտք գործեց Ս. Վարդան մայր տաճար, ուր նրանց դիմավորեց մայր տաճարի լուսարարապետ Տ. Մարտիրոս քհն. Չեւյանը:

Ապա առաջնորդարանի դահլիճում ԼՂՀ նախագահին դիմավորեցին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ Արեւելյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Վեհափառ Հայրապետը, որ վերջին վիրահատությունից հետո խոսելու դժվարություն ուներ, փոքր գրատախտակի վրա արձանագրեց իր ողջույնի խոսքը, հաջողության մաղթանքներն ու որոշ հարցեր, որոնք ընթերցեց գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամյանը: Սա Վեհափառ Հայրապետի առաջին պաշտոնական հանդիպումն էր վիրահատությունից հետո:

«Վեհափա՛ռ Տեր, Հայաստանի եւ Ղարաբաղի ղեկավարներն ու ժողովուրդը կարոտել են Ձեզ»,- ի պատասխան Նորին Սրբության ողջույնին՝ ասաց ԼՂՀ նախագահը:

Վեհափառ Հայրապետին հայտնելով ԱՄՆ կատարած այցի նպատակների մասին՝ ԼՂՀ նախագահը գոհունակություն հայտնեց այցելության արդյունքների առնչությամբ: Ա. Ղուկասյանը նշեց, որ Միացյալ Նահանգների ու եվրոպական մի շարք երկրների վերաբերմունքը փոխվում է ի նպաստ Ղարաբաղի: ԼՂՀ նախագահը հայտնեց նաեւ, որ մի շարք ամերիկյան նավթային ընկերություններ դադարել են հետաքրքրվել Ադրբեջանի նավթով, քանի որ նավթի պաշարների մասին նախապես արված հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը:

«Ճնշում կա Ադրբեջանի վրա, որպեսզի խաղաղության հարցը լուծվի երկու երկրների համաձայնությամբ: Այս պահը պետք է ճիշտ օգտագործենք: Հուսով ենք, որ կկարողանանք հաջողություն ձեռք բերել»,- ասաց ԼՂՀ նախագահը:

Նախագահը հայտնեց նաեւ ՄԱԿ-ում տրված մամլո ասուլիսի եւ ամերիկահայ մեծահարուստների հետ ունեցած հանդիպումների մասին՝ նշելով, որ վերջինիս ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել Ղարաբաղին նյութական օժանդակություն տրամադրելու եւ Ղարաբաղում աշխատատեղեր ստեղծելու շուրջ:

Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամյանը Ա. Ղուկասյանին ներկայացրեց ԱՄՆ Արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդի ընդհանուր տնօրեն Սիմոն Եզնիկ Պալյանին: Պրն. Պալյանը, խոսելով երկրաշարժից անմիջապես հետո Հայաստանում եւ Ղարաբաղում ՀՕՖ-ի իրականացրած մարդասիրական գործունեության մասին, հայտնեց, որ ՀՕՖ-ի ղարաբաղյան գրասենյակը նախատեսում է ընդարձակել իր մարդասիրական ծրագրերը հանրապետությունում:

Հանդիպման ավարտին ԼՂՀ նախագահն իր երախտիքի խոսքն ուղղեց ամերիկահայությանն ու Հայ Եկեղեցուն՝ ցուցաբերած օժանդակության համար:

Հանդիպմանը ներկա էին նաեւ հոգեշնորհ հայրեր եւ այլ պաշտոնյաներ:

***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՅՑԸ ՎԱՏԻԿԱՆ

*Սկիզբը՝ էջ 1*

Ապա երկու հովվապետն ու ՀՀ նախագահը առիթ ունեցան զմայլվելու ցուցահանդեսի երեք խորհրդանշական նմուշներով, որոնք էին՝ Նոյան տապանի մասունքը (Մայր Աթոռից), Լեւոն Ա Հայոց արքայի նամակը Իննոկենտիոս Գ Պապին՝ կնքված ոսկյա կնիքով (Վատիկանի գաղտնի դիվանից) եւ 1197 թվականի հունարեն մի ձեռագիր՝ Ներսես Լամբրոնացու հայերեն նշումներով (Վատիկանի առաքելական գրադարանից):

Հռոմի Քահանայապետի մեկնումից հետո Վեհափառ Հայրապետը, արհամարհելով իր ֆիզիկական տկարությունը, քայլեց մինչեւ ցուցասրահ, որտեղ կարճ ելույթ ունեցան Վատիկանի մոտ ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ա. Սարգսյանը եւ Վատիկանի առաքելական գրադարանի տնօրեն Խորխե Մեջիա արքեպիսկոպոսը: Ապա Վեհափառն անցողիկ կերպով դիտեց ցուցահանդեսի սքանչելի նմուշները եւ վերադարձավ հյուրանոց:

Մարտի 25-ի առավոտյան ժամը 11.30-ին Վատիկանի Պապական պալատում տեղի ունեցավ Հռոմի Պապի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումն ու առանձնազրույցը՝ Խաժակ սրբազանի օժանդակությամբ: Առանձնազրույցից հետո Հռոմի Պապն ընդունեց Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամներին, որի ընթացքում փոխանակվեցին պաշտոնական ուղերձներ:

Վեհափառ Հայրապետն իր ֆրանսերեն ուղերձում, որն ընթերցեց Գյուտ սրբազանը, իր ուրախությունը հայտնեց մեկ անգամ եւս Վատիկանում նման ջերմ ընդունելություն գտնելու համար, որ նշան էր իր Եկեղեցու հանդեպ Կաթոլիկ Եկեղեցու սիրուն եւ գնահատանքին:

«Հայցում եմ Սուրբ Հոգուց, որպեսզի մեզ օգնի լինել մարդկանց ծառաները եւ ընթանալ միության ճանապարհով, որին մեզ հրավիրում է Քրիստոս»,- իր պատասխան խոսքում ասաց Հռոմի Քահանայապետը՝ իր հիացմունքը հայտնելով Հայոց Հայրապետի աննկուն կամքի եւ կորովի նկատմամբ՝ դաժան հիվանդության դեմ պայքարում:

Տեղի ունեցավ հուշանվերների փոխանակում, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը Հռոմի Պապին նվիրեց արծաթյա ձեռաց խաչ, իսկ Կաթոլիկ Եկեղեցու պետը Հայոց Քահանայապետին նվիրեց ոսկեզօծ սկիհ:

Այսքանով ավարտվեց Վեհափառ Հայրապետի Վատիկան այցելության պաշտոնական մասը, եւ հաջորդ օրը՝ մարտի 26-ին, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, գավազանակիր Տ. Խորեն արք. Հովհաննիսյանի ուղեկցությամբ, մեկնեց Լոնդոն: Նույն օրը Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամները մեկնեցին իրենց պաշտոնատեղիները:

«Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ հուլիսի 16-ը՝ Հռոմի բնակիչներին եւ հավիտենական քաղաք այցելող բազմահազար զբոսաշրջիկներին ծանոթացնելու հայոց քրիստոնեական ժառանգության անկորնչելի արժեքներին:

***Միքայել ծ. վրդ. ԱՋԱՊԱՀՅԱՆ***

# ՀԱՎԱՔ-ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԹԵՄԵՐԻ ՔԴԿ-ՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Մարտի 15-ին Ս. Էջմիածնի ՔԴՔԿ-ում տեղի ունեցավ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանյան թեմերի քրիստոնեական դաստիարակության կենտրոնների (ՔԴԿ) պատասխանատուների եւ մյուս ներկայացուցիչների հավաք-հանդիպում ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրեն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի հետ:

Ներկա էին. Շիրակի թեմից՝ հոգեւոր սպասավորներ Տ. Թաթուլ քհն. Հակոբյանը եւ Արթուր սրկ. Պողոսյանը, Արցախի թեմից՝ ՔԴԿ-ի պատասխանատու Տ. Գեւորգ քհն. Կրտիկաշյանը եւ երեցկին ու աշխատակից Հասմիկ Մխիթարյանը, Արագածոտնի թեմից՝ ՔԴԿ-ի պատասխանատու Տ. Հայկազուն քհն. Մկրտչյանը, Գեղարքունյաց թեմից՝ ՔԴԿ-ի պատասխանատու Տ. Գնել քհն. Մարտիրոսյանը, Գուգարաց թեմից՝ ՔԴԿ-ի պատասխանատու Սուսաննա Սարուխանյանը եւ կիրակնօրյա դպրոցների տեսուչ Ռոբերտ սրկ. Աղազարյանը, Սյունյաց թեմից՝ ՔԴԿ-ի պատասխանատու Լոռետա Սարգսյանը, Կոտայքի թեմից՝ ՔԴԿ-ի պատասխանատու Հարություն Հարությունյանը, Արմավիրի թեմից՝ ՔԴԿ-ի պատասխանատուի պաշտոնակատար Ենոք Հայրապետյանը եւ աշխատակից Գեղամ Հայրապետյանը:



Ներկա չէր միայն Արարատյան թեմի ՔԴԿ-ի ներկայացուցիչը:

Բացման խոսքով հանդես եկավ ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրեն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը: Նա նշեց, որ հավաք-ժողովի նպատակն է տեղեկանալ թեմերի ՔԴԿ-ների գործունեությանն ու աշխատանքային պայմաններին, լսել առաջարկներ՝ փոխադարձ կապն ամրապնդելու եւ համագործակցությունն ընդլայնելու վերաբերյալ: Նաեւ ընդգծեց հանրակրթական դպրոցներում քրիստոնեական կրոն դասավանդելու հարցը պետական գործընթաց դարձնելու անհրաժեշտությունը: «Եկեղեցին պատրաստակամ է հնարավորինը ներդնել այդ կարեւորագույն հարցի լուծման համար, սակայն առանց պետական աջակցության, աշխատանքի ծավալները մեծացնել հնարավոր չէ»,- ասաց նա:

Այնուհետեւ բանախոսը մանրամասնորեն ներկայացրեց Ս. Էջմիածնի ՔԴՔԿ-ի գործունեությունը՝ ստեղծման օրից սկսած: Այս մասին զեկույց-տեղեկագիրը տպագրված է «Քրիստոնեայ Հայաստանի» 1998 թ. նոյեմբեր Բ համարում:

Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի առաջարկով ՔԴԿ-ների պատասխանատուներն իրենց զեկույցները ներկայացրին՝ անդրադառնալով հետեւյալ կետերին.

1. գրասենյակի առկայություն,
2. պատասխանատու, աշխատակից(ներ),
3. տեխնիկական միջոցներ,
4. տրանսպորտային միջոցներ,
5. տարեկան բյուջե,
6. կատարված աշխատանքները,
7. առաջիկա ծրագրերը,
8. առաջարկներ,
9. օպերատիվ փոխադարձ կապ:

Շիրակի թեմի իրավիճակը ներկայացրեց Արթուր սրկ. Պողոսյանը: Նա տեղեկացրեց, որ ՔԴԿ ձեւավորված չէ: Կան մի քանի նվիրյալ ուսուցիչներ, ովքեր դասավանդում են որոշ դպրոցներում, սակայն այդ աշխատանքը տարերային բնույթ ունի: Առաջարկցանկություն հայտնեց թեմում կազմակերպելու կրոնի դասընթաց՝ դպրոցներում համակարգված աշխատանք սկսելու նպատակով:

Մյուս բանախոսների ելույթներից պարզվեց, որ հիմնական խնդիրները վերաբերում են տարեկան բյուջեի բացակայությանը, տեխնիկական եւ տրանսպորտային միջոցների անբավարար քանակությանը, օպերատիվ կապ ապահովելու դժվարությանը: Այս խնդիրները կաշկանդումներ են առաջացնում տարածաշրջանների հեռավոր գյուղերում աշխատանքներ ծավալելու հարցում:

Բոլոր թեմերի այն բնակավայրերում, ուր կազմակերպվել են կրոնի դասընթացներ, շրջանավարտների բազայի վրա բացվել են կիրակնօրյա դպրոցներ, դրանց կից գործում են մանկական տարաբնույթ խմբակներ ու համույթներ (ազգագրական պար, հոգեւոր երգչախումբ): Դպրոցների սաների եւ գործող քրիստոնեական կազմակերպությունների (երիտասարդաց, տիկնանց միություններ) ջանքերի համատեղմամբ՝ տաղավար եւ կրոնական այլ տոների առիթներով կազմակերպվում են հանդիսություններ, խաղ-մրցույթներ, ստուգատեսներ (Արցախ, Գուգարք, Սյունիք, Արմավիր):

Լայնածավալ քարոզչական աշխատանք է կատարվում Արագածոտնի թեմում. հոգեւորականի հանդիպում հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակազմերի հետ, քարոզարշավ դեպի գյուղական բնակավայրեր, աղոթաթերթիկների բաշխում, քարոզխոսություններ տեղական մամուլում, հեռուստատեսությամբ: Հոգեւոր թերթոնների միջոցով հավատացյալներին տոնախոսականներ, աղոթքներ, ավետարանական պատգամներ փոխանցելու փորձը կիրառվում է նաեւ Գուգարաց թեմում: Ամեն կիրակի միայն Վանաձորում բաժանվում է 2000 օրինակ: Նույն թեմի ՔԴԿ-ի աշխատակիցները պարբերաբար այցելում են ծերանոց, մանկատուն: Իսկ Գեղարքունյաց թեմի ՔԴԿ-ի պատասխանատուն տարածաշրջանի մանկատանը շաբաթը երեք անգամ կանոնավորապես կրոնի դասեր է անցկացնում: Այս թեմում կիրառվում է շրջիկ Պատարագներ մատուցելու փորձը:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ

## *Ուխտագնացություն դեպի Խոր Վիրապ*

Մարտի 20-ին, ի հիշատակ Գրիգոր Լուսավորիչ հայրապետի Մուտն ի Վիրապ տոնի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ա-Գ լսարանների սաները, տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի գլխավորությամբ, ուխտագնացության մեկնեցին դեպի Խոր Վիրապի վանք: Ուխտագնացությանը միացան նաեւ Արմավիր քաղաքի մի խումբ ուխտավորներ: Այս ամենը կազմակերպվել էր Հոգեւոր ճեմարանի տեսչության կողմից: Ճեմարանականները ճանապարհին արմավիրցի ուխտավորներին ծանոթացրին Ս. Գրիգորի վարքի հետ, այնուհետեւ հնչեցին հոգեզմայլ շարականներ, արտասանվեցին մի շարք բանաստեղծություններ (Գարեգին պատրիարք Տրապիզոնցի. «Լուսավորչի աջը», Պաղտասար Դպիր. «Ս. Գրիգոր Լուսավորչին», Ժագ Ս. Հակոբյան. «Լուսավորչական», Վահան Թեքեյան. «Լուսավորչի կանթեղը» եւ այլն):

Վերջապես ավտոբուսները՝ ճեմարանականներով եւ մյուս ուխտավորներով լեցուն, մոտեցան Խոր Վիրապին, այն վայրին, ուր սքանչելագործ հայրապետի մուտքով Հայոց աշխարհը մտավ Կենաց Մատյանի մեջ եւ օրհնաբանվեց Տիրոջ Կենարար Աջով: Այդ օրը Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանի կողմից սուրբ եւ անմահ Պատարագ մատուցվեց Խոր Վիրապի եկեղեցում, որին մասնակցում էին նաեւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի սաները:

Հայաստանի տարբեր մարզերից բազմաթիվ ուխտավորներ էին եկել Խոր Վիրապ: Նրանք եկել էին իրենց աղոթքը հղելու առ Աստված, որպեսզի Ամենակալ Տերը սուրբ եւ պատվական Գրիգոր Լուսավորիչ հայրապետի բարեխոսությամբ ողորմած լինի Հայոց ազգի նկատմամբ:

Խոր Վիրապի գբի մոտ մարդկանց մեծ բազմություն էր հավաքվել: Նրանց բոլորի նպատակը մեկն էր. իջնել ներքեւ եւ տեսնել այն փոքրիկ խուցը, որտեղ բազմաչարչար հայրապետը շուրջ 14 տարի ապրեց օձերի եւ կարիճների հետ եւ իրեն ապավեն ունեցավ միայն իր Փրկչին՝ Հիսուս Քրիստոս Աստվածորդուն:

Ճեմարանականներն ուխտավորների հետ միասին Խոր Վիրապում իրենց աղոթքը բարձրացրին առ Աստված «Վասն անսասանութեան եւ շինութեան Եկեղեցւոյս Հայոց եւ վասն պահպանութեան համայն ազգիս Հայոց»:

Պատարագի ավարտից հետո Արմավիրից եկած ուխտավորները եւ Գեւորգյան ճեմարանի սաները, հոգեպես զորացած, վերադարձան Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Մեր ձայնը նույնպես միախառնենք Խոր Վիրապ ժամանած ուխտավորների աղոթքին եւ ձեռքներս առ Աստված պարզելով՝ աղաչենք ու ասենք. «Քրիստո՛ս, Որդի՛ Աստծո, մեր սքանչելագործ հայրապետի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի բարեխոսությամբ քո առատ ողորմությունը, գթությունն ու խաղաղությունը պարգեւիր մեզ եւ զորացրո՛ւ քո Տերունյան Խաչի շնորհաբաշխ օրհնությամբ, որպեսզի ամրապնդվի ողջ հայության հավատի խարիսխը»:

***Արմեն ԱՌԱՔԵԼՅԱՆ***
*Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Գ լսարան*

# ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

Զատիկին նախորդող շաբաթը կոչվում է Ավագ, այն մեզ է ավանդում մեր Տեր Յիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին յոթ օրերի՝ ուսուցումների, չարչարանքների, մահվան եւ հարության խորհուրդը: Այս շաբաթվա յուրաքանչյուր օրն իր հերթին կրում է Ավագ անվանումը: Ավագ շաբաթ նշանակում է նաեւ Մեծ շաբաթ:

Ավագ շաբաթին նախորդում է Ծաղկազարդի կիրակին՝ Յիսուս Քրիստոսի մուտքը Երուսաղեմ, որի մասին պատմում են չորս Ավետարանները. «Եւ բազում ժողովուրդ իրենց զգեստները փռեցին ճանապարհի վրա, իսկ ուրիշներ ծառերից ճյուղեր էին կտրում ու սփռում ճանապարհի վրա: Առջեւից եւ հետեւից գնացող ժողովրդի բազմությունը աղաղակում էր եւ ասում. «Օրհնությո՜ւն Դավթի Որդուն, օրհնյա՜լ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնությո՜ւն բարձունքներում» (Մատթ., ԻԱ, 8-9):

## ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐԸ

**Ավագ երկուշաբթի - Անպտուղ թզենու առակը.** այսօր հիշատակում ենք Անպտուղ թզենու առակը (Մատթ., ԻԱ, 18-22, Մարկ., ԺԱ, 12-14, 20-25) եւ Երուսաղեմի Տաճարի մաքրագործումը (Մատթ., ԻԱ, 12-17, Մարկ., ԺԱ, 15-19, Ղուկ. ԺԹ, 45-48, Յովհ., Բ, 13-22):

Բեթանիայից Երուսաղեմ վերադառնալիս Յիսուս քաղց է զգում: Եւ ճանապարհի վրա մի թզենի տեսնելով՝ մոտենում է եւ նրա վրա ոչինչ չգտնելով, այլ միայն՝ տերեւ, թզենուն ասում է. «Այսուհետեւ քեզնից հավիտյան պտուղ թող չլինի»: Եւ նույն պահին թզենին չորանում է: Յիսուս, անիծելով տերեւներով զարդարված, բայց անպտուղ թզենուն, փարիսեցիներին էր ակնարկում, որոնք զարդարված արտաքին բարեպաշտությամբ՝ չունեին այդ բարեպաշտության հոգեւոր պտուղը՝ բարի գործերը եւ ողորմածությունը:

Պտուղը խորհրդանշում է հավատի գործերն ու առաքինությունները, որոնցից զուրկ մարդը կպատժվի այս թզենու օրինակով:

Երուսաղեմի Տաճարի մաքրագործումը կատարվեց ի խնդիր հավատի մաքրության. «Յիսուս մտավ տաճար ու դուրս հանեց բոլոր նրանց, որ տաճարի մեջ վաճառում եւ գնումներ էին անում: Եւ նրանց ասաց. «Գրված է՝ Իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք արել այդ» (Մարկ., ԻԱ, 12-13): Աստծու Տաճարն աղոթքի եւ պաշտամունքի տուն է, եւ այն չի կարելի առք ու վաճառքի տեղ դարձնել: Այս մոտեցմամբ՝ Տաճարի մաքրագործումը նման է գալիք Դատաստանին:

**Ավագ երեքշաբթի - Տասը կույսերի առակը.** նվիրված է տասը կույսերին (Մատթ., ԻԵ, 1 - 13), որոնք իրենց լապտերներն առած՝ փեսային դիմավորելու ելան: Նրանցից հինգը հիմար էր, իսկ հինգը՝ իմաստուն: Յիմարները լապտերները վերցրին, բայց իրենց հետ բավարար չափով ձեթ չվերցրին: Իսկ իմաստուն կույսերն իրենց հետ ամաններով վերցրին ձեթի բավարար պաշար, ուստի երբ կեսգիշերին փեսան եկավ, նրանք պատրաստ էին պահել իրենց լապտերները եւ Նրա հետ հարսանիքի սրահը մտան, ու դուռը փակվեց: Յետո եկան մյուս հինգ կույսերն էլ ու ասացին. «Տե՛ր, Տե՛ր, բա՛ց արա»: Նա պատասխան տվեց ու ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում»:

Եկեղեցու հայրերը խորհրդաբանական իմաստներ են տվել այս առակին. փեսան Քրիստոսն է, եւ հարսանիքի սրահը՝ երկնքի արքայությունը, որին արժանանում են հինգ իմաստուն կույսերը: Տասը կույսերն օրինակն են քրիստոնյաների: Լապտերը խորհրդանշում է կույսերի առաքինությունը, իսկ ձեթը՝ բարեգործությունն ու ողորմածությունը:

Ավագ երեքշաբթին մի ներքին ընդհանրությամբ կապված է նախորդ օրվա հետ՝ ակնարկում է, որ մեր առաքինի գործերի պտուղներով հոգեպես պետք է պատրաստ լինենք Քրիստոսի երկրորդ գալստյանը, այլապես կչորանանք թզենու պես եւ դուրս կմնանք Երկնքի արքայությունից հինգ հիմար կույսերի նման:

Ավագ երեքշաբթի՝ երեկոյան ժամերգության ընթացքում, եկեղեցու ատյան են դուրս գալիս տասը մանուկներ՝ խորհրդանշելով տասը կույսերին, իրենց ձեռքին ունենալով մոմեր՝ հինգը վառվող, իսկ հինգը՝ հանգած: «Մանուկների ձեռքը վառվող մոմ են տալիս, որը խորհրդանշում է հավատքի լույսը, Աստծու պատվիրաններն աչքի առաջ ունենալը եւ գործելը՝ ըստ այն խոսքի. «Քո խոսքերը ճրագ են իմ ոտքերի համար» (Սաղմ., ՃԺԸ, 105)» (Ս. Գրիգոր Տաթեւացի):

Օրվա ավետարանական պատգամն է. «Արթուն կացեք, որովհետեւ չգիտեք ոչ օրը եւ ոչ էլ ժամը»:

**Ավագ չորեքշաբթի - Օծում եւ մատնություն.** այսօր հիշատակում ենք մեղավոր կնոջը (Մատթ., ԻԶ, 6 - 13, Մարկ., ԺԴ, 3-9, Յովհ., ԺԲ, 1-11), որ թանկագին յուղով օծում է Քրիստոսի գլուխը, որով խորհրդանշում է Տիրոջ մոտալուտ մահը: Առաքյալները մեղադրեցին այդ կնոջը՝ յուղը վատնելու համար. «Կարելի էր մեծ գնով վաճառել այդ եւ տալ աղքատներին»: Յիսուս իմացավ ու նրանց ասաց. «Ինչո՞ւ եք նեղություն տալիս այդ կնոջը. նա Իմ հանդեպ մի բարի գործ կատարեց. աղքատներին ամեն ժամ ձեզ հետ ունեք, բայց Ինձ միշտ ձեզ հետ չեք ունենա: Իմ մարմնի վրա այդ յուղը թափելով՝ նա Իմ թաղվելը կանխանշեց: Բայց ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ամբողջ աշխարհում, ուր էլ այս Ավետարանը քարոզվի, պիտի պատմվի դրա հիշատակին, նաեւ ինչ որ դա արեց»:

Յիսուս պաշտպանեց այդ կնոջը՝ նրա արարքը նկատելով իբրեւ գեղեցիկ եւ ընծայական: Քրիստոս գիտեր, որ այդ օծումը նախապատրաստությունն էր Իր մահվան:

Այս օծմանը հաջորդեց Յուդայի՝ Յիսուսին մատնելու վճիռը. «Այն ժամանակ Տասներկուսից մեկը՝ Յուդա Իսկարիովտացի կոչվածը, գնաց քահանայապետի մոտ ու ասաց. «Ի՞նչ կկամենայիք ինձ տալ, որ ես նրան ձեզ մատնեմ»: Եւ նրանք երեսուն արծաթ դրամ խոստացան նրան» (Մատթ., ԻԶ,14-15):

**Ավագ հինգշաբթի - Վերջին ընթրիք՝ Հաղորդության խորհրդի հաստատում, Ոտնլվա.** առավոտյան մատուցվում է Սուրբ Պատարագ՝ ի հիշատակ Վերջին ընթրիքի ժամանակ հաղորդության խորհրդի հաստատման (Մատթ., ԻԶ, 17-25, Մարկ., ԺԴ, 12-26, Ղուկ., ԻԲ, 7-14, 21-23, Յովհ., ԺԳ, 21-30), երբ Յիսուս Քրիստոս վերնատանը վերցրեց հացը, օրհնեց, կոտրեց եւ տվեց տասներկու աշակերտներին ու ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ մարմինը»: Ապա բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է Նոր ուխտի Իմ արյունը, որ թափվում է շատերի համար» (Մատթ., ԻԶ, 26-30):

Պատարագն իմաստավորվում է մարդկանց փրկության համար Քրիստոսի զոհաբերությամբ՝ խաչվելով, Իր արյունը հեղելով եւ հաղորդության խորհրդի կատարումով, որը Սուրբ Սեղանի վրա օրհնված եւ պատարագված հացն ու գինին է, այն Յիսուս Քրիստոսի Մարմինն ու Արյունն է եւ հավատացյալների համար հոգեւոր սնունդ է. «Ով ուտում է Իմ Մարմինը եւ ըմպում Իմ Արյունը, հավիտենական կյանք ունի» (Յովհ., Զ, 55):

**Ոտնլվա.** Ավագ հինգշաբթի՝ երեկոյան, կատարվում է Ոտնլվայի արարողությունը. Վերջին ընթրիքից հետո Յիսուս ջուրը լցրեց կոնքի մեջ, ծունկի եկավ Իր աշակերտների առջեւ ու ծառայաբար լվաց նրանց ոտքերը եւ սրբեց մեջքին կապված սրբիչով (Յովհ., ԺԳ, 5)՝ մեզ հեզության ու խոնարհության անզուգական դաս տալով: «Եթե ես՝ Տերս եւ Վարդապետս, լվացի ձեր ոտքերը, դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ, որովհետեւ մի օրինակ տվի ձեզ, որ ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձեւով անեք» (Յովհ., ԺԳ, 1-20):

Եկեղեցու մեկնիչ սուրբ հայրերը գրում են, թե Ադամը պտուղը ճաշակելիս նախ ոտքերով ընթացավ, այսինքն՝ քայլեց դեպի ծառը, եւ Քրիստոս էլ՝ մարդ արարածի քայլերը դեպի Երկնքի արքայություն ուղղելուց առաջ նախ նրանց ոտքերը լվաց:



Ոտնլվայի արարողության ծիսակարգի ու աղոթքների հեղինակ է համարվում Ընդհանրական եկեղեցու տիեզերալույս վարդապետներից՝ սուրբ Եփրեմ Խուրի Ասորին (306-373): Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերը (1066-1105) ԺԱ դարում այդ կարգը թարգմանել է հայերենի եւ ներմուծել Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգ: Յետագայում կարգը հարստացել է նաեւ զուտ հայկական շարականներով ու աղոթքներով, որոնցից են «Սիրտ իմ սասանի» գեղեցկահյուս մեղեդին ու Յովհաննես Պլուզ վարդապետի «Սիրո մասին» խորիմաստ խրատը:

Եպիսկոպոսը կամ եկեղեցու քահանան տասներկու մանուկների կամ եկեղեցու սպասավորների հետ բարձրանում է խորան: Յոգեւորականը խաչով եւ Ավետարանով օրհնում է խորանում դրված ջուրը եւ յուղը՝ «Օրհնեցի եւ սրբեցի այս յուղն ու ջուրը» խոսքերով: «Պահպանիչ» աղոթքից հետո հոգեւորականը վերցնում է սրբիչը, ծունկի գալիս եւ լվանում այս տասներկուսի ոտքերը եւ յուղով օծում: Արարողության վերջում կարդացվում է Ավետարան, ուր հիշատակվում է Քրիստոսի ձեռքով կատարված ոտնլվան: Յիսուս աշակերտների ոտքերը միայն ջրով լվաց, իսկ Ոտնլվայի արարողության ընթացքում յուղի օգտագործումը խորհրդանշում է Յիսուսի ոտքերին պոռնիկ կնոջ թափած անուշահոտ յուղը (Յովհ., ԻԲ, 3):

Արարողությունից հետո հավատացյալներին բաժանվում է օրհնված յուղ, որը տանելով տուն՝ պահում ենք մեր յուղի ամանի մեջ՝ որպես առատության խորհրդանիշ: Օրհնված յուղը տալիս ենք նաեւ հիվանդներին՝ հավատալով, որ նրանք կբժշկվեն:

**Խավարում.** Ավագ ուրբաթ օրը մեր Տեր Յիսուս Քրիստոսի չարչարանքների եւ խաչելության հիշատակի օրն է, այսօր Տիրոջ գլխին փշե պսակ դրեցին, ծարավը հագեցնելու համար ջրի փոխարեն լեղի տվեցին, ծաղրեցին, անարգեցին ու տեգով խոցեցին: Քրիստոս այս բոլոր չարչարանքները հանձն առավ եւ խաչափայտի վրա հոգին ավանդեց՝ մարդկության փրկության եւ մեղքերի քավության համար:

Եկեղեցու հայրերն ասում են, թե փշե պսակ կրեց, որ ջնջի Ադամին տրված անեծքը, թե «փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը» (Ծննդ., Գ, 28): Ադամը, խախտելով պատվիրանը, ձեռքը մեկնեց դրախտի ծառին, ի քավություն որի՝ Քրիստոսի ձեռքով բեւեռվեց խաչափայտին եւ Ադամի կերած պտուղի փոխարեն լեղի խմեց:

Եւ քանի որ խաչելությունից հետո արեգակը խավարեց, այսօր կոչում ենք Խավարման օր: Նկատի ունենալով, որ եկեղեցական օրենքով՝ հաջորդ օրն սկսվում է երեկոյան ժամերգությունից հետո, հետեւաբար ուրբաթ օրվա հիշատակը կատարվում է հինգշաբթի երեկոյան:

Արարողությունն սկսվում է գիշերը. խորանի վրա վառվում է տասներկու հավասարաչափ մոմ, եւ մեկ հատ էլ մեծ դրվում է նրանց միջեւ: Խավարման ընթացքում Ավետարաններից կարդացվում է յոթ հատված, որոնք բովանդակում են Յիսուսի Գեթսեմանի պարտեզում աղոթելը, Յուդայի մատնելը, Յիսուսի՝ ամբոխի ձեռքը հանձնվելը, Աննայի եւ Կայիափայի առաջ տարվելը, ապտակվելը, անարգվելը եւ Պետրոսի երեք անգամ ուրանալն ու զղջալը: Ավետարանական ընթերցումներն ընդմիջվում են սաղմոսների ընթերցանությամբ եւ Սուրբ Ներսես Շնորհալու հեղինակած շարականներով: Ամեն մի ավետարանական ընթերցումից հետո հանգցնում են տասներկու մոմերից մեկը՝ յուրաքանչյուր կողմից մեկական, վերջում մնում է միայն մեջտեղի մեծ մոմը: «Տեր յերկնից» շարականից հետո հանգցնում են եկեղեցու բոլոր լույսերը, եւ երգվում է «Փառք ի բարձունս» շարականը, որն առաջին անգամ ասել են հովիվները. «Փա՜ռք Աստծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրա խաղաղությո՜ւն եւ հաճությո՜ւն՝ մարդկանց մեջ» (Ղուկ., Բ, 14): «Ծագեա» շարականի ժամանակ դարձյալ վառում են լույսերը: Մոմերը հանգցնելը խորհրդանշում է աշակերտների թողնել-փախչելը, իսկ մեջտեղի մոմը խորհրդանշում է Քրիստոսին, որ մնացել էր միայնակ:

**Ավագ ուրբաթ** - եկեղեցին հիշատակում է Յիսուս Քրիստոսի չարչարանքներն ու խաչելությունը (Մատթ., ԻԷ, 32-44, Մարկ., ԺԵ, 21-32, Ղուկ., ԻԳ, 26-43, Յովհ., ԺԸ, 17-27): Զատկական ընթրիքից հետո Գեթսեմանիի այգում Յուդայի առաջնորդությամբ հռոմեացի զինվորները ձերբակալում են Յիսուսին: Այս պահից սկսվում են Յիսուսի չարչարանքները, որոնց հիշատակությունները եկեղեցին սրբագործել է պատշաճ արարողակարգով: Յիսուս Քրիստոս հանձնվում է մեղավորների ձեռքը եւ դատապարտվում մահվան:

Ավագ ուրբաթ օրվա խորհուրդը առնչվում է խաչելության պատմությանը: Խաչելությունը Պատարագումն է Աստծու Գառան՝ Յիսուս Քրիստոսի: Խաչի մահվամբ իրականանում են եւ իրենց լրումն են հասնում Յին Կտակարանի մարգարեությունները Մեսիայի գալստյան եւ փրկչական առաքելության վերաբերյալ: Խաչի վրա Յիսուս քանդեց մեղքի եւ մահվան կապանքները: Յիսուսի մահը խորհրդավոր էր. արեւն ու լուսինը խավարում են, Երուսաղեմի Տաճարի վարագույրը, բաժանվելով երկու մասի, վերից վար պատռվում է, երկիրը շարժվում է, եւ ժայռերը՝ ճեղքվում, բացվում են գերեզմանները:

Եկեղեցու վարդապետությունն ուսուցանում է, որ Յիսուս Իր մահվանից հետո հոգով իջավ դժոխք ու հիմնահատակ ավերեց այն: Փրկության լույսը փարատեց դժոխքի խավարը:

**Ավագ շաբաթ - Դժոխքի ավերում, Ճրագալույցի Պատարագ.** Ավագ շաբաթ օրը նվիրված է Յիսուսի թաղման (Մատթ., ԻԷ, 57-61, Մարկ., ԺԵ, 42-47, Ղուկ., ԻԳ, 50-56, Յովհ., ԺԹ, 38-42) եւ գերեզմանի կնքման (Մատթ., ԻԷ, 62-66) հիշատակին: Քրիստոս Նիկոդեմոսի եւ Յովսեփ Արիմաթացու ձեռքով իջեցվում է խաչափայտից (Մատթ. ԻԷ, 57-60), փաթաթվում պատանքով ու դրվում վիմափոր գերեզմանի մեջ: Գերեզմանի մուտքը փակում են վեմ քարով: Եւ քանի որ, ըստ հրեական օրենքի, հանգստի ժամանակ էր, աշակերտները հեռանում են գերեզմանից այն հույսով, որ հաջորդ օրը կվերադառնան, կխնկարկեն ու կօծեն Յիսուսի մարմինը. «Եւ օրը ուրբաթ էր, ու լուսանում էր շաբաթը» (Ղուկ., ԻԴ, 54): Յիսուսի մարմինը գերեզմանում մնում է երեք օր ու գիշեր եւ երրորդ օրը հարություն առնում, ինչպես Ինքն էր մարգարեացել Իր մասին (Մատթ., Ի, 19): Քրիստոս, գերեզման դրվելով, հոգով իջնում է դժոխք եւ ավերում այն՝ փրկություն շնորհելով արդարների հոգիներին:

Շաբաթ երեկոյան կատարվում է Ճրագալույցի Պատարագ: «Ճրագալույց» նշանակում է ճրագը վառել: Յնում ամեն կիրակի երեկոյան, ձեթ էին լցնում կանթեղների մեջ եւ վառում, հետագայում, սակայն, Ճրագալույց անվանվեց երեկոյան Պատարագը, որը մեր եկեղեցում կատարվում է բացառապես Ծննդյան եւ Յարության տոներին նախորդող օրվա երեկոյան: Զատիկի Ճրագալույցի Պատարագի ժամանակ, երբ տրվում է Քրիստոսի հարության ավետիսը, ավարտվում է Մեծ պահքը:

**Զատիկ - Յիսուս Քրիստոսի Յարության տոնը.** Ավետարանները, իրար լրացնելով, հաղորդում են Յիսուսի հրաշք հարությունը (Մատթ., ԻԸ, 18, Մարկ., ԺԶ, 1-10, Ղուկ., ԻԴ, 1-12, Յովհ., 1-10):

Յուղաբեր կանայք գնացին գերեզման, որպեսզի անուշահոտ յուղերով օծեն Յիսուսին: «Եւ ասում էին միմյանց. «Քարը գերեզմանի դռնից մեզ համար ո՞վ պիտի գլորի» (Մարկ., ԺԶ, 3): Բայց վեմը մի կողմ էր ընկած: Գերեզմանի մուտքը բաց էր, գերեզմանը՝ դատարկ. Յիսուսի մարմինը հարություն էր առել...

Երկու լուսավոր զգեստներով մարդիկ՝ հրեշտակներ, յուղաբեր կանանց հաստատեցին եղելությունը. «Ինչո՞ւ ողջին մեռելների մեջ եք փնտրում: Այստեղ չէ, այլ հարություն առավ» (Ղուկ., ԻԴ, 5): Կանայք վերադառնում են աշակերտների մոտ եւ տարածում հարության ավետիսը: Քրիստոսի հարությունը դարձավ քրիստոնեական հավատքի հիմքն ու վարդապետությունը. «Եթե մեռելների հարություն չկա, ապա եւ Քրիստոս հարություն չի առել: Եւ եթե Քրիստոս հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է եւ ձեր հավատը» (Ա Կորնթ., ԺԵ, 13-14):

Ավագ շաբաթվա երեկոյան եկեղեցին կատարում է Ճրագալույցի Պատարագ, որով եւ սկսվում է Յարության տոնը, իսկ կիրակի օրը Զատկական Պատարագով այն վերածվում է համընդհանուր տոնախմբության: Յիսուս Իր մահով հաղթեց մահվանը՝ մարդ արարածներիս փրկության համար:

Զատկական Պատարագին մասնակցելիս, երբ լսում ենք **«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»** ավետիսը, չլինենք Տիրոջը մատնողի ու խաչ հանողների գործակիցը, մենք էլ մեր ձայնը բարձրացնենք, ականատեսները լինենք Քրիստոսի հարության՝ պատասխանելով. **«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:**

*Վիգեն սրկ. ՂԱԶԱՐՅԱՆ*

# ԿԱԼԿԱԹԱՅԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

## *ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԿԼԻՆԻ ՀՆԴԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏԱԳԱ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ*

*Փետրվարի 15-ին, Կալկաթայի գերագույն դատարանի որոշմամբ, տեղի հայոց Մարդասիրական ճեմարանը հանձնվեց Ամենայն Հայոց կաթողիկոսությանը, եւ դրանով իսկ կանխվեց ճեմարանի գոյության սպառնացող վտանգը: Նույն որոշման համաձայն՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին վերապահվեց ճեմարանն իր ցանկացած ձեւով վարելու իրավունքը:*

*Ճեմարանը հիմնվել է 1821թ., եւ Սփյուռքի, թերեւս, ամենահին ուսումնական հաստատությունն է, որտեղ ժամանակին ուսանելու են եկել նաեւ Նոր Ջուղայի, Սպահանի եւ Իրաքի հայ համայնքներից: Ճեմարանում է դասավանդել ականավոր մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանը: Մարդասիրականն անընդմեջ գործել է եւ այսօր էլ օգտվում է ուսումնական հաստատությունների համար Հնդկաստանում սահմանված բոլոր արտոնություններից: Սակայն երբեմնի հայաշատ գաղութը, որի թիվը ներկայումս 100-ից ավելի չէ, ճեմարանում ունի ընդամենը 5 աշակերտ: Նրանց թիվն այս տարվանից, Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ, կավելանա Հայաստանից եւս 30 մանուկով, որ կուսանեն ճեմարանի հարմարավետ պայմաններում: Ճեմարանն ունի իր գրադարանը, լողավազանը, սպորտային համալիրը, տղաների եւ աղջիկների համար նախատեսված առանձին կացարաններ:*

*Ճեմարանի հետագա գործունեության եւ հնդկահայ համայնքին վերաբերող հարցերին պատասխանում է Մարդասիրական ճեմարանի կառավարիչ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ **Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը**:*

**- Հայտնի է, որ տարիներ առաջ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը հայաստանցի աշակերտների միջոցով պահպանելու փորձը ձախողվեց: Ինչպե՞ս կայացվեց ճեմարանը Մայր Աթոռին վերադարձնելու որոշումը:**

- Երկու-երեք տարի առաջ Մարդասիրական ճեմարանի հետագա գոյությունը վտանգված էր: Այն կարող էր վաճառվել կամ իր դռները բանալ հնդիկ ուսանողների համար: Այս մտադրությունները կանխելու նպատակով Վեհափառ Հայրապետն առաջարկեց ուսանողներ տանել Հայաստանից, որպեսզի ճեմարանը գործի նորմալ, եւ սպառնալիքը վերանա:

Սակայն ճեմարանի հոգաբարձուների խորհուրդը շահագրգռված չէր ճեմարանի հետագա գործունեությամբ՝ մանավանդ մի քանի տարի առաջ կրթության նախարարության կողմից ճեմարանը հայաստանցի ուսանողներով վերակենդանացնելու փորձի կատարյալ ձախողումից հետո: Այդ անհաջող փորձը խորհրդին թույլ տվեց ասելու, թե ճեմարանը չունի ուրիշ ապագա, քան վաճառքը: Համայնքը կիսվեց երկու մասի: Մի մասը ցանկանում էր, որ ճեմարանը մնա հայկական, մյուս մասը կարծում էր, որ դա այլեւս անհնար է:

Վերջին մեկ ու կես տարվա ընթացքում Հնդկաստան կատարած երեք այցելություններիս արդյունքը եղավ այն, որ ճեմարանի պահպանմամբ շահագրգիռ մարդիկ եկան այն եզրակացության, որ լավագույն լուծումը կրթական հաստատությունը Մայր Աթոռին հանձնելն է: Հնդկահայերի այս խումբն էլ դիմեց դատարան: Եւ ահա դատարանի որոշմամբ՝ ճեմարանն անվերադարձ կերպով տրվեց Մայր Աթոռին, իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսն իրավունք եւ իշխանություն ստացավ տնօրինելու ճեմարանն իր ցանկացած ձեւով: Այս ամենի հետ մեկտեղ ճեմարանը ոչ մեկ լումայի ծախս չի նստելու Մայր Աթոռի վրա: Ճեմարանն ապահովված է ֆինանսական լայն հնարավորություններով, եւ խելացի չէր լինի չօգտագործել այդ հնարավորությունները:

**- Ինչպե՞ս կկազմակերպվի ճեմարանի հետագա գործունեությունը:**

- Ճեմարան ընդունվում են 7 տարեկանից: Մտածեցինք, որ լավագույն տարբերակն ամեն տարի ճեմարանում 30 աշակերտից բաղկացած նոր առաջին դասարան բացելն է, որի շնորհիվ 10 տարվա ընթացքում հնարավոր կլինի ունենալ 300 աշակերտից բաղկացած հսկայական ուսումնական հաստատություն:

Ուսուցման հիմնական լեզուն լինելու է անգլերենը՝ բացառությամբ հայագիտական առարկաների, որոնց ուսուցիչները կմեկնեն Հայաստանից: Մյուս բոլոր առարկաները, որոնք դասավանդվում են նաեւ Հնդկաստանի դպրոցներում, երկրում գործող օրենքի համաձայն, կուսուցանեն բացառապես հնդկաստանցի ուսուցիչներ: Արդեն կատարվել է հայաստանցի ուսուցիչների ընտրությունը: Ուսուցիչ ամուսիններից բաղկացած երեք ընտանիք մեկ տարի պայմանագրային ժամկետով կմեկնեն Հնդկաստան:



Ճեմարանի ուսուցման ծրագիրը կհամաձայնեցվի թե՛ հայկական եւ թե՛ հնդկական ծրագրերի հետ: Մեծ ուշադրություն կդարձվի հայերենի ուսուցմանը, մանավանդ որ ճեմարանն ավարտելուց հետո ուսանողները վերադառնալու են Հայաստան, քանի որ Հնդկաստանը չի արտոնում ուսանողների հետագա կեցությունն ու աշխատանքը երկրում:

Սակայն այն ուսանողների համար, որոնք ցանկություն կունենան բարձրագույն ուսում ստանալ Հնդկաստանում, այդ հարցը եւս լուծված է: Այդպիսի ուսանողների համար Կալկաթայի հայ համայնքի կողմից ստեղծվել է հիմնադրամ, որը կոչվելու է Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի անունով եւ որը կապահովի տարեկան 4-5 ուսանողի կրթական ծախսերը Հնդկաստանի համալսարաններում:

**- Կրթության նախարարության փորձի ձախողման հիմնական պատճառներից մեկը երեխաների սխալ ընտրությունն էր: Մայր Աթոռն ի՞նչ սկզբունքով ընտրված երեխաներ կուղարկի Հնդկաստան:**

- Երեխաներն ընտրվում են առաջին հերթին որբանոցներից, ապա գիշերօթիկ դպրոցներից կամ միակողմանի ծնողազուրկ եւ սոցիալապես խիստ անապահով ընտանիքներից: Այսինքն՝ ընտրվում են այնպիսի երեխաներ, որոնք այստեղ ապրում են շատ ավելի ծանր պայմաններում, քան կապրեն այնտեղ:

**- Նպատակը բարի է, այդուհանդերձ, մեծ պատասխանատվություն չէ՞ որբ երեխաների ճակատագրերի նմանօրինակ տնօրինումը, երբ երեխաները կտրվում են իրենց հարազատ ազգային եւ մշակութային միջավայրից:**

- Բնականաբար, երեխաները կտրվում են հայրենի միջավայրից, սակայն այդ բացը կարող են լրացնել հայաստանցի ուսուցիչները: Փոխարենը երեխաները կունենան լայն աշխարհայացք, որովհետեւ Հնդկաստանը բազմաթիվ մշակույթների խառնարան է: Ճեմարանում ուսանելով՝ երեխաները կատարելապես կտիրապետեն անգլերենին, որը մեծ ապագայի հնարավորություն կընձեռի նրանց:

**- Ինչպիսի՞ն է հնդկահայ համայնքի ներկայիս նկարագիրը:**

- Կալկաթայի հայ համայնքը 300-400 տարվա պատմություն ունի եւ դարերով մեկուսացված լինելով Հայաստանից՝ կորցրել է կապը Հայաստանի հետ: Այսօր այն բնավ նման չէ սփյուռքահայ մնացած գաղթօջախներին, որոնք ստեղծված լինելով Մեծ եղեռնից հետո՝ պահպանում են հայկականությունը եղեռնի եւ պատմական Հայաստանի մասին հիշողություններով: Հնդկահայ համայնքի կապը Հայաստանի հետ զուտ անվանական է: Համայնքը չի զգում Հայաստանի ջիղը, եւ Հայաստանն ու Էջմիածինը նրանց համար վերացական հասկացություններ են: Այդ իմաստով՝ նրանց մոտ այն մտայնությունն է իշխում, որ այն ամենը, ինչ կտակված է իրենց հայրերի կողմից, իրենցն է:

Հնդկահայ համայնքն այսօր չափազանց փոքրաթիվ է՝ կազմված հիմնականում տարեցներից, որոնք բնակվում են Կալկաթայում: Ունի 7 գործող եկեղեցի, որոնցից 5-ը Կալկաթայում եւ նրա շրջակայքում են, երկուսը՝ Բոմբեյում եւ Մադրասում: Վերջին երկու քաղաքներում հայություն այլեւս չկա: Ծիսական արարողություններ մատուցվում են միայն Կալկաթայի եկեղեցիներում: Ամեն անգամ շրջիկ քահանան պատարագ է մատուցում այս կամ այն եկեղեցում, որտեղ եւ հավաքվում է ժողովուրդը: Տարին 1-2 անգամ պատարագ է մատուցվում նաեւ Կալկաթայի մերձակա Չինսուրահի եւ Սեհդաբադի եկեղեցիներում:

**- Հնդկահայ համայնքը ենթարկվում է Ամենայն Հայոց կաթողիկոսին: Իրավունքների ի՞նչ շրջանակ է ներառնում այս, եւ արդյո՞ք Մայր Աթոռը կարող է տնօրինել դարերի ընթացքում հնդկահայ համայնքի կողմից ստեղծված արժեքները, որոնց մասին հաճախ առասպելներ են պատմվում:**

- Թե որքան է հնդկահայ համայնքի ողջ հարստությունը, այդ մասին ճշգրիտ տվյալներ չունենք: Գումարների մասին շատ բան է խոսվում: Առասպելական թվեր են ասվում, առասպելներ են պատմվում նաեւ ժամանակին Ինդիրա Գանդիի Հայաստան գալու մասին: Դրանք բոլորը մտացածին են:

Այո՛, Կալկաթայի համայնքն ունի բավական մեծ հարստություն (կալվածքներ, խանութներ, շենքեր, հիմնադրամներ), որով ինքնաբավ է, եւ կարելի է ավելի մեծ գործ անել Սփյուռքի պայմաններում: Սակայն Հնդկաստանի օրենսդրությունը դրա հնարավորությունը չի տալիս, որովհետեւ հնդկական օրենքներով՝ դրամական փոխանցումները երկրից դուրս արգելված են:

Հնդկահայ համայնքն իրապես ենթարկվում է Ամենայն Հայոց կաթողիկոսությանը, սակայն դա չի նշանակում կաթողիկոսության վարչական իշխանություն դրամական հիմնադրամների եւ կալվածքների վրա: Այդ իրավունքը պատկանում է Հնդկաստանում գործող Հնդկահայ եկեղեցու խորհրդին, որի կանոնադրության համաձայն՝ խորհրդի անդամ կարող են դառնալ նրանք, ովքեր ճանաչում են Ամենայն Հայոց կաթողիկոսի իշխանությունը եւ մկրտված են Հայաստանյայց Առաքելական եկեղեցում: Սա է ամբողջը: Այլ իշխանություն Ամենայն Հայոց կաթողիկոսը չի ունեցել եւ չունի: Այսօր է, որ պետք է ունենա:

**- Արվո՞ւմ են այդ ուղղությամբ գործնական քայլեր:**

- Կան այդպիսի ծրագրեր, սակայն դրանք կապված կլինեն ճեմարանի վերարթնացման հետ: Եթե Մայր Աթոռը ցույց տա, եւ հուսով եմ՝ ցույց կտա, որ ճեմարանը Մայր Աթոռին տալը բարեբախտություն է եղել հնդկահայ համայնքի համար, եւ համայնքը միայն շահել է, ապա, բնականաբար, կալվածքները, որոնք այսօր տեղի համայնքի իշխանության ներքո են եւ միայն խորհրդանշական կերպով են պատկանում Մայր Աթոռին, կամաց-կամաց իրական կերպով կվերադարձվեն Մայր Աթոռին: Այդ ժամանակ Մայր Աթոռը կկարողանա տնօրինել բոլոր կալվածքներն ու հիմնադրամները, որպեսզի օգտակար լինի հայ ազգին եւ Մայր Եկեղեցուն:

*Զրույցը վարեց Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆԸ*

# ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՆՇԱՆ ԳԱԶԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆԸ

Ամեն բան սկսվեց այն բանից հետո, երբ ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի հայ ատամնաբույժների միության պրեզիդենտ Գերի Գեւորգյանն ու փոխպրեզիդենտ Նշան Գազազյանն իրենց բուժխմբով եկան հայրենիք՝ ատամնաբուժական ծառայություն մատուցելու:

Խումբն սկզբնական առաքելությունն սկսեց Գյումրիում՝ նպատակ ունենալով իր կարողությամբ եւ պատրաստվածությամբ օգտակար լինել երկրաշարժի գոտու երեխաներին: Հայրենիք հաջորդ այցի ժամանակ ատամնաբույժները եղան Մայր Աթոռում՝ ցանկանալով այս անգամ իրենց նպաստը բերել Մայր Աթոռի միաբանությանն ու Հոգեւոր ճեմարանի սաներին: Մոտ մեկ շաբաթ բուժումներ կատարելուց հետո խումբն այստեղից մեկնեց հանրապետության մի շարք զորամասեր, եղավ նաեւ Արցախում: Այն բոլոր վայրերում, ուր եղան ամերիկահայ ատամնաբույժները, կատարվում էր գոհացուցիչ աշխատանք:

Եւ ահա այս աշխատանքների ընթացքում միության փոխպրեզիդենտ Նշան Գազազյանի մտքում ծնվում է եւս մի գեղեցիկ գաղափար. Մայր Աթոռում ստեղծել ատամնաբուժական առանձին աշխատասենյակ, որն, իրոք, մեծ նվեր կլիներ Մայր Աթոռի միաբանությանն ու Գեւորգյան ճեմարանի ուսանողներին: Սակայն, ցավոք, նա չկարողացավ իր մտադրությունն իրականացած տեսնել: 1997-ի գարնանը նա անսպասելիորեն հրաժեշտ տվեց կյանքին:

Բայց աննահանջ էին Նշանի կինը, բարեկամները, ընկերները, որոնք ցանկանում էին ամեն կերպ իրագործված տեսնել այն ծրագիրը, որը նախատեսել էր իրենց սիրելի անձնավորությունը: Նշան Գազազյանի հուղարկավորման ժամանակ ներկաների բարեհոգության շնորհիվ այդ ծրագրի ֆինանսավորման համար արդեն իսկ զգալի գումար հավաքվեց: Սարքավորումների ծախսերը հովանավորում էր Գազազյանի կինը: Երբ գրեթե ամեն աշխատանք ավարտված էր, բոլորի միահամուռ ցանկությամբ որոշվեց, որ բացվելիք ատամնաբուժարանն անվանվի հենց նրա՝ Նշան Գազազյանի անունով:

1997-ի աշնանը տեղի ունեցավ ատամնաբուժարանի հանդիսավոր բացումը: Ներկա էին մեծ թվով հյուրեր, Հայաստանի տարբեր շրջաններից եկած ատամնաբույժներ, Նշանի հարազատները, կինը եւ որդին: Ներկա էին մի շարք բարձրաստիճան հոգեւորականներ, եկեղեցականներ, Հոգեւոր ճեմարանի սաներ: Ատամնաբուժարանի բացման արարողությունը ղեկավարող գերաշնորհ Տ. Ներսես արք. Ներսիսյանի խոսքից հետո հանգուցյալի հոգու հանգստյան համար կատարվեց հոգեհանգիստ:



Ապա տեղի ունեցավ ատամնաբուժարանի օրհնման արարողությունը: Ատամնաբուժարանի մուտքը փակող ժապավենը կտրելու պատիվը շնորհվեց Նշան Գազազյանի փոքրիկ որդուն՝ Հայկազին:

Բացման օրից սկսած մինչեւ այսօր ատամնաբուժարանն աշխատում է անխափան ու արդյունավետ: Հայաստանի այս կամ այն շրջանում աշխատած ամերիկահայ ատամնաբույժների հայաստանաբնակ օգնականներից երկուսը՝ Անետա Այվազյանն ու Անժելա Հարությունյանը, իրենց գործում ավելի մասնագիտանալով, այժմ դարձել են բուժկետի հիմնական ու բարեխիղճ աշխատողները: Նրանք աշխատում են իրենց օգնականների՝ Մերիի եւ Ջեննիի հետ: Այստեղ բուժվողները երախտապարտ են հաստատության գոյության համար: Թող ուրեմն անմոռաց մնան իրենց գործով Նշան Գազազյանն ու մյուս բարեգործները, եւ միշտ բարի անունով հիշվեն այսօր ատամնաբուժարանում աշխատող բժիշկները:

*Գեւորգ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

*Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Դ լսարանի սան*

# «ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆ ԵՒ 50-ՐԴ ՀԱՄԱՐԸ

*1997-ի մարտին, Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինի կարգադրությամբ, Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի կազմում հիմնադրվեց «Քրիստոնեայ Հայաստան» թերթը, եւ լույս տեսավ անդրանիկ համարը: Այն սկսվում էր «ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՋԱԼԵՐԱՆՔՈՎ», որը ոչ միայն Վեհափառ Հայրապետի բարեմաղթանքը, այլեւ առաջիկա գործունեության հստակ ուղենշումն ու պատգամն էր: Հայրապետական այս արքաչան պատգամը մշտապես մեր մտքում ու աչքի առաջ ենք ունեցել անցնող տարիներին եւ փորձել ենք, ըստ կարելվույն, արդարացնել Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր վստահությունը: Այժմ, երբ տպագրվում է թերթի 50-րդ համարը, նախկինից ավելի մեծ տպաքանակով եւ տպածման ավելի լայն ծիրով, ուզում ենք կրկին անգամ մեր ընթերցողի ուշադրությանը հանձնել Վեհափառ Հայրապետի այդ գրությունը, որը խորհրդանշական կերպով կարող ենք միաժամանակ մեր թերթի ծննդյան վկայականն ու սահմանադրությունը համարել:*

«ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ»...

*Յանկուցիչ անուն*

*Յագեցած պատմական ճշմարտութեամբ,*

*Իրողական ճշմարտականութեամբ:*

Այս մտայղացմամբ կողջունենք ի լոյս ընծայումը կրօնական երկշաբաթաթերթիս Մայր Աթոռոյ վերին հովանաւորութեան ներքեւ եւ Քրիստոնէական Դաստիարակութեան եւ Քարոզչութեան Կեդրոնի շրջագծին մէջ:

Մեզ համար «Քրիստոնեայ Հայաստանը» երեք հիմնական առաքելութիւններ ունի.

ա) Ծանօթացնել մեր ժողովրդին մեր եկեղեցւոյ այսօրուա՛ն կեանքը, գլխաւորաբար Մայր Աթոռի եւ իր հայաստանեան եւ արտասահմանեան թեմերու մէջ իրագործուող: Ծանօթացումը, իրազեկ դառնալը, հաղորդ ըլլալը գիտակցական պատասխանատուութեան էական ազդակներէն մէկն է: Մանաւանդ, այս դարուն հաղորդակցութեան անհրաժեշտութիւնը առօրեայ հացի չափ կենսական է դարձած եւ նաեւ՝ արագընթաց ու բազմատարած՝ արդիական նոր տեխնիկական միջոցներու զարգացումով: Ժողովուրդը պէտք է գիտենայ, թէ ինչպէս կ՚ապրի, ի՞նչ կը՛նէ եւ ի՞նչ պարտաւոր է ընել իր եկեղեցին, որ Գարեգին Յովսէփեան կաթողիկոսի բառերով՝ «գերագոյն հարստութիւնն է հայ ժողովուրդին»:

բ) Ծանօթացնել ընդհանրապէս մեր եկեղեցւոյ դաւանանքը, ծէսը, կարգն ու կանոնը, բարոյական սկզբունքները, պատմութիւնն ու մշակութային ժառանգութիւնը, որ այնքան սերտօրէն անքակտելիօրէն շաղախուած է հայ ժողովուրդի ողջ պատմութեան եւ գոյութեան հետ: Իմ հայեցողութեամբ՝ մեր Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցին շատ աւելին է, քան ինչ որ մենք ցարդ գիտենք անոր մասին: Իմ ընթերցումներուս մէջէն գրեթէ ամէն օր նորանոր արժէքներ, երեւոյթներ եւ երեսներ կը բացուին ինծի համար: Անչափելի խորութեամբ եւ անսպառելի հարստութեամբ հանք մըն է ան, որ որքան պեղես՝ այնքան լոյս, բարիք ու երջանկութիւն կը ցայտեն եւ կեանքդ կը լեցնեն:

Շուրջ երկու հազար տարիներու քրիստոնէական վկայութիւնը մեր ժողովուրդին՝ այնպիսի բազմազանձ իրագործումներու աղբիւր մըն է եղած, ուրկէ որքան խմես՝ այնքան աւելի կը հովանաս, կը զովանաս ու կը հարստանաս եւ կը հպարտանաս:

Այսօր մեր ժողովուրդը թէ՛ Հայաստանի եւ թէ՛ արտասահմանի մէջ անմիջական եւ ստիպողական կարիքն ունի իր եկեղեցին սերտօրէն եւ հարազատօրէն ճանաչելու եւ հաղորդուելու անոր անցեալի անժանգելի արժէքներուն հետ:

գ) Տարածել քրիստոնէական հաւատքը Հայց. Եկեղեցւոյ աւանդութեամբ ապրուած՝ մեր ժողովուրդի այսօրուայ, ներկայ Հայաստանի Հանրապետութեան մէջ ապրող ժողովուրդի զավակներուն նոր կեանքի պայմաններուն եւ պահանջներուն համաձայն:

Խորհրդային շրջանի 70 տարիներու պատճառած թմրութեան դէմ զարթուցիչ խթան թող ըլլայ «Քրիստոնեայ Հայաստանը»: Թող աւելի պէս սրբէ անաստուածութեան, անտարբերութեան հետքերն ու վէրքերը եւ թող սերմնացանի պէս վերստին ցանէ Քրիստոսի Ս. Աւետարանին եւ մեր Սրբազան Հայրերու շունչն ու ոգին, խօսքն ու գործը մեր նորանկախացեալ Հայաստանի ժողովուրդին:

Հայրական ջերմ սիրով կը յանձնարարենք զայն մեր քրիստոնեայ հայ ժողովուրդին, որպէսզի առաւել պայծառ գոյն ստանայ հայութիւնը քրիստոնէութեա՛մբ, եւ քրիստոնէութիւնը վառ երանգ կապէ հայութեա՛մբ եւ Հայաստանո՛վ, ընդ հովանեաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

---

## ՄԵՆՔ ՈՒ ՄԵԶ ԹՂԹԱԿՑՈՂՆԵՐԸ

*«**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ՝ 50-ՐԴ ՀԱՄԱՐԻ** առիթով, կարծում ենք, որ մեր ընթերցողներից շատերին կհետաքրքրի, թե ովքեր են աշխատում թերթում, ովքեր են առավել գործուն կերպով թղթակցում մեզ: Հոգեւորական հեղինակներից ամենից շատ հրապարակումներ ունեցել ենք թերթի հիմնադիր՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինից (քարոզներ, տեղեկագրեր, կոնդակներ, զրույցներ եւ այլն):*

*Կրոնական թերթի ավանդույթը Հայաստանում նոր է, ուստի 50-րդ՝ հոբելյանական համարի հանգամանքը թույլ է տալիս թերթի մեկ էջն այս անգամ հատկացնել խմբագրությանն ու մեր հեղինակներին:*

*Հոբելյանական համարը ենթադրում է հոբելյանական տրամադրություն, ուստի մեր տեղեկատուն զուրկ չէ հումորի երանգից: Եւ այսպես...*

**ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ**



«Քրիստոնեայ Հայաստանի» գլխավոր խմբագիր:

Մասնագիտությամբ՝ պատմաբան, պատմական գիտությունների թեկնածու, չորս գրքի եւ շուրջ 50 գիտական հոդվածի հեղինակ:

41 տարեկան է, ամուսնացած, ունի երեք երեխա, որոնցից ավագը 2-րդ կուրսի ուսանողուհի է:

Թերթից բացի, իր աշխատանքային եռանդը «ծախսում է» Գեւորգյան ճեմարանում (ժամանակին՝ 1985 թ., ճեմարանի ամենաերիտասարդ դասախոսն էր), Հայաստանի ազգային պատկերասրահում, Հայ քրիստոնեական մշակույթի «Մոմիկ» միությունում:

Առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու միտք չունի:

**ՆԱՐԵ ՆԱՎԱՍԱՐԴ**



«Քրիստոնեայ Հայաստանի» առաջին աշխատակիցներից է, մինչ այդ աշխատել է «Արվեստ» ամսագրում, «Հայրենիքի ձայն» թերթում: Բանասեր է, ՀՀ լրագրողների միության անդամ: Իր ուսերին է կրում թերթի նյութերի լեզվաոճական խմբագրման եւ սրբագրության բեռը:

Ունի երեքուկես տարեկան Արամ Սեւակ, որին սիրում է աշխարհի չափ:

**ԱՆՆԱ ԱԼՈՅԱՆ**



«Քրիստոնեայ Հայաստանի» ամենանոր աշխատակիցը, բայց լրագրային աշխատանքի պատշաճ փորձով («Երեկոյան Երեւան»): ՔԴՔԿ-ի մշակույթի բաժնում հեռուստահաղորդումների սցենարների հեղինակ է: Սննդի հարցում սակավապետ է: Վերջերս հայր Մակարի հետ վարած նրա հարցազրույցն արժանացել է խմբագրի հատուկ ուշադրությանը:

Զգացմունքային է, մի խոսքով՝ բանաստեղծական կերպար:

**ԺԱՆՆԱ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ**



«Քրիստոնեայ Հայաստանի» առաջին աշխատակիցներից է, նյութերի համակարգչային շարվածքի պատասխանատուն: Աչքերի գույնը՝ կանաչ, սիրում է նկարել: Ընտանեկան դրության մասին տե՛ս գլխավոր խմբագրի տվյալները:

**ԱՐԱՐԱՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱՓՈՅԱՆ**



ՔԴՔԿ-ի կազմակերպչական աշխատանքներից աչք բացելու կարճատեւ պահերին իր լուման է բերում «Քրիստոնեայ Հայաստանին»:

Արարատը Արարատից է: ՔԴՔԿ-ի միասնական ընտանիքում հայտնագործեց իր սեփական ընտանիքը (տե՛ս հաջորդ անունը): Ասպետական բնավորություն ունի եւ սուր հումոր:

**ԷԼՎԻՐԱ ՀՈՎԱՆՅԱՆ**



1998-ի ամռանից «Քրիստոնեայ Հայաստանի» ձեւավորողն է: Իր համար նոր այս մասնագիտությունը յուրացրեց զարմանալի կարճ ժամկետում: Բարեխիղճ է, կայտառ ու կենսուրախ: Այս տարվա հունվարից Արարատ սարկավագի հարսնացուն է:

**ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ**



«Քրիստոնեայ Հայաստանի» կրոնական նյութերի հիմնական «գրաքննիչը» (մերժված նյութերի հեղինակները թող իմանան, թե ում «շնորհակալությունն» հայտնեն): Այժմ ՔԴՔԿ-ի հրատարակչական բաժնի խմբագիր: Նախկինում խմբագրել է Արցախի թեմի «Խոսք» թերթը: Աշխատում է թեկնածուական դիսերտացիայի վրա:

Իր սիրելի Միրանին գտել է «Գանձասարում», եւ երկուսով հիմա հազիվ են տանում իրենց պստլիկ Ներսեսի չարաճճիությունները:

**ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ**



Այժմ ՔԴՔԿ-ի հրատարակչական բաժնի ոճաբան, մինչ այդ՝ «Քրիստոնեայ Հայաստանի» լրագրող: Տերմինաբանական կոմիտեի որոշումների ջերմ պաշտպան եւ հայոց լեզվի բծախնդիր մասնագետ:

Շատ է սիրում ամուսնուն, երեխաներին եւ թոռնիկին: Նաեւ դասավանդում է: Իր ուսանողներին հանձնարարել էր տեստ լրացնել. գրված էր՝ «Սերո...», պետք էր ավելացնել բաց թողած տառը: Աղջիկներն ավելացրել էին «բ», իսկ միակ տղան՝ «ժ»:

**ՎԻԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՂԱԶԱՐՅԱՆ**



ՔԴՔԿ-ի հրատարակչական բաժնի աշխատակից, մեր փորձված հեղինակներից: Աշխատանքի մեջ նրան կարելի է բնութագրել մեկ բառով՝ «ինքնամոռաց»:

Այո՛, իր անձը կարող է մոռանալ, բայց «Քրիստոնեայ Հայաստանը» չի մոռանում անգամ Թալինում դասախոսություն կարդալիս:

**ՔԴՔԿ-ի պատերից դուրս ունենք մեզ առավել հաճախակի թղթակցություն տրամադրող լրատվական գրասենյակներ ու հեղինակներ: Գրասենյակներից ամենաակտիվը Մայր Աթոռի մամլո դիվանն է՝ ղեկավարությամբ Հեղինե Մկրտչյանի:**

**Հոգեւորական հեղինակներից երախտագիտությամբ պիտի նշենք Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին, Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանին եւ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանին:**

**Վերջին շրջանում ուրախալի է հատկապես ճեմարանականների ակտիվացումը:**

**ՀՐԱՆՏ ԴՊԻՐ ԿՈՍՏԱՆՅԱՆ**



Գեւորգյան ճեմարանի 5-րդ լսարանի սան: Ուսումնական տարվա սկզբից ամեն ամիս «Քրիստոնեայ Հայաստանին» է հանձնում «Ճեմարանական կյանք» խորագրի նյութերը, նաեւ հարցազրույցներ վարում: Նրան մեր թերթի արտահաստիքային թղթակիցն ենք համարում:

Կատակասեր է: Չի թաքցնում, որ «աչք ունի գլխավոր խմբագրի աթոռի վրա»: Իսկ գլխավոր խմբագիրը դրան ըմբռնումով է մոտենում:

**ԱՐԹՈՒՐ ԴՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**



Գեւորգյան ճեմարանի սան: «Քրիստոնեայ Հայաստանը» (նաեւ այլ թերթեր) հոդվածներով ռմբակոծող ծանր հրետանի: Թեեւ համեստ ու ինքնամփոփ է, բայց երբ գրիչը ձեռքն է առնում, դառնում է Հայ Եկեղեցու ավանդությունն ու դավանանքը պաշտպանող քաջակորով մարտիկ:

**Թվարկված հեղինակներից բացի, ունենք շատ այլ թղթակիցներ, հատկապես ՔԴՔԿ-ի կրոնի դասընթացներն ավարտած ուսուցիչների թվից: Նշենք նաեւ ՀՀ պետական ռադիոյի «Արածանի» հոգեւոր-կրոնական հաղորդաշարի հեղինակ Սիլվա Սուքիասյանին, որը «Քրիստոնեայ Հայաստանում» տպագրված հարցազրույցների ռեկորդակիրն է: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում «Քրիստոնեայ Հայաստանում» տպագրված նյութերի բոլոր հեղինակներին՝ բարձրաստիճան հոգեւորականից մինչեւ դպրոցականը: Մեր թերթը Ձե՛ր թերթն է, շարունակե՛ք գրել մեզ:**

***«ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ»***

# ՈՒՌԵՆՈՒ ՕՐՀՆՅԱԼ ՃՅՈՒՂԵՐ

*«Արդարները արմավենու պես կծաղկեն ... «եւ պտղաբեր ձիթենու նման» ... կտնկվեն Տիրոջ տանը»*
*(Սաղմ., ՂԱ, 13, 14, ԾԱ, 10):*

Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու, ինչպես նաեւ Ընդհանրական Ս. եկեղեցու մաս կազմող մյուս եկեղեցիների հոգեւոր ավանդություններից է Ծաղկազարդի տոնին հավատացյալներին օրհնված ճյուղեր բաժանելը:





Սույն ավանդությունն Աստվածորդու Երուսաղեմ մուտքի հիշատակն է, երբ հրեաները ձիթենու (թեեւ Ավետարաններում չի նշվում, որ արմավենու ճյուղերի (Հովհ., ԺԲ, 13) հետ եղել են նաեւ ձիթենու ճյուղեր, սակայն Ավետարանների այն վկայությունը, թե «իսկ ուրիշներ ծառերից ճյուղեր էին կտրում» (Մատթ., ԻԱ, 8, Մարկ., ԺԱ, 8), Ս. Գր. Տաթեւացուն հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ ճյուղերը ձիթենու ոստեր են եղել. «Թէպէտ ոչ յիշէն, թէ ուստի հատանէին, այլ զի ի Ձիթենեաց լեառն էին՝ որ լցեալ էր ձիթենեօք, զի երեւի թէ՝ յայնցանէ հատանէին») եւ արմավենու ճյուղերով Քրիստոսին ընդառաջ գնացին:

Ոստերի ընծայումը, ըստ սուրբ հայրերի, խորհրդանշում էր նախ՝ Աստծո ողորմությունը (ձիթենու ճյուղեր) մարդու հանդեպ եւ Քրիստոսի խաչելությամբ ու հարությամբ՝ հաղթանակը (արմավենու ճյուղեր) մեղքի, մահվան ու սատանայի դեմ: Երկրորդ՝ որովհետեւ նախածնողների մեղանչման պատճառով Տերն անիծեց երկիրը՝ «փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը» (Ծննդ., Գ, 18), ուստի որպեսզի այն փշաբերության անեծքից ազատվի, երբայեցի ծերերն ու մանուկները Տիրոջ առջեւ ոստեր էին փռում: Երրորդ՝ քանի որ հնում, ընկալյալ սովորության համաձայն, օլիմպիական խաղերի ժամանակ հաղթողներին ոստերով էին պսակում, ուստի հրեաները, հասկանալով, որ Հիսուս Քրիստոս, Ղազարոսին հարություն (Հովհ., ԺԱ, 30, 46) տալով, մահվանը հաղթել է, դրա համար իբրեւ հաղթող Թագավորի՝ Նրան արմավենու ոստերով ընդառաջ ելան: Այլեւ՝ ոստերը խորհրդանշորեն հորդորում են, որ ադամորդին Տիրոջ փրկագործական առաքելությունը գիտակցելով եւ Նրան անսալով՝ ծաղկի ու պտղաբերի Տիրոջ պատվիրանների կատարմամբ եւ բազմապատկի իրեն պարգեւված աստվածային շնորհները, ըստ այնմ. «Արդարները արմավենու պես կծաղկեն ... «եւ պտղաբեր ձիթենու նման» ... կտնկվեն Տիրոջ տանը: Դրանք պտղաբեր կլինեն նաեւ ծերության ժամանակ՝ գիրգ ու փափուկ, որպեսզի ավետեն, թե ճշմարիտ է Տերը, եւ Նրա մեջ անիրավություն չկա» (Սաղմ., ՂԱ, 13, 16, ԾԱ, 10):

Ուստի հնավանդ ավանդույթի համաձայն՝ Ս. եկեղեցիներում, ի հիշատակ Երուսաղեմ Տիրոջ հաղթական մուտքի, հավատացյալներին բաժանվում են ձիթենու եւ արմավենու օրհնված ճյուղեր: Արդ, քանի որ Հայաստան աշխարհում ձիթենի ու արմավենի չեն աճում, այդ պատճառով մեր երանելի հայրերի տնօրինությամբ՝ դրանց փոխարեն Հայոց եկեղեցում նախապատվությունը տրվեց ուռենու ոստերին, որոնք էլ առավոտյան ժամերգության ընթացքում՝ Անդաստանի կարգից հետո, բաժանվում են հավատացյալներին:

Իսկ ինչո՞ւ նախապատվությունը տրվեց ուռենու եւ ոչ այլ ծառերի ոստերին: Այս հարցին պատասխանելով՝ Ս. Գրիգոր Տաթեւացին ասում է. «Այսօր մենք ուռենիների ոստերով ընդառաջ ենք ելնում Քրիստոսի՝ [Երուսաղեմ] այս գալստյանը (հմմտ. Մատթ., ԻԱ, 8) : եւ սա ութ պատճառով.

Նախ՝ որովհետեւ ուռենին բոլոր տեղերում՝ լեռներում ու դաշտերում հեշտությամբ է գտնվում:

Երկրորդ՝ որովհետեւ [ուռենին] վայրի է ու անպտուղ, որ խորհրդանշում է հեթանոս ազգերի վայրի ու անպտուղ լինելը (հմմտ. Հռոմ., ԺԱ, 17), այսինքն՝ հավատքից ու գործերից, սրանցով էլ՝ Քրիստոսին հնազանդության եկած [լինելը] (հմմտ. Գաղ., Գ, 8, Հակ., Բ, 22):

Երրորդ՝ որովհետեւ երբ ուռենին տնկում են, շատ արմատներ է արձակում ու կանաչում: Նույնպես եւ հեթանոս ազգերը, առաքյալների քարոզությունների լրմանը, իսկույն հավատացին եւ Քրիստոսի մեջ արմատներով հաստատվեցին (հմմտ. Մատթ., ԻԱ, 31): Իսկ հրեաները [թեեւ] Օրենք ու մարգարեներ ունեին, եւ [թեեւ] Քրիստոս նրանց ազգից ծնվեց եւ երեսուներեք տարի նրանց մեջ ապրեց, սակայն նրանք չհավատացին Նրան (հմմտ. Հովհ. ԺԲ, 37, 43), այլեւ խաչեցին ու Տիրասպաններ եղան (հմմտ. Գործք., Է, 52):

Չորրորդ՝ որովհետեւ երբ ուռենու գլուխը կտրում են ու ջրում, բազում ճյուղեր է արձակում: Նույնպես եւ հեթանոս ազգերը, որոնք [Մկրտության սուրբ] ավազանի կենդանարար ջրով ոռոգվեցին եւ Քրիստոսի հավատքի համար չարչարանքներով գլխատվեցին, Քրիստոսից երկնքի արքայության մեջ իրենց գլուխներին բազում ու տարատեսակ պսակներ պիտի առնեն (հմմտ. Գործք., ԺԴ, 21, Հայտ., Բ, 10):

Հինգերորդ՝ որովհետեւ ուռենին թույլ ու փափուկ է, նույնպես եւ Քրիստոսին հետեւողները պարտավոր են հոգով հեզ ու խոնարհ լինել (հմմտ. Մատթ., ԺԱ, 29), որպեսզի կանաչազզվարճ փառքով Վերին Երուսաղեմ բարձրանան:

Վեցերորդ՝ որովհետեւ ուռենին սնամեջ է եւ ուրիշ ծառերի նման լիքը չէ: [Սա] ցույց է տալիս, թե նրանք, ովքեր Քրիստոսին հետեւեցին, պարտավոր են այս աշխարհի սիրուց ու փարթամություններից դատարկ ու թափուր լինել (հմմտ. Մատթ., ԺԶ, 24), որովհետեւ Տերն ասում է. «Երանի՜ հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ., Ե, 3):

Յոթերորդ՝ որովհետեւ ուռենու կեղեւը տտիպ է: [Սա] մատնանշում է, որ Քրիստոսին հավատացողները պետք է այս աշխարհում տրտմեն ու սգան, որպեսզի այնտեղ ուրախանան, ըստ այնմ՝ «Երանի՜ սգավորներին, որովհետեւ նրանք պիտի մխիթարվեն» (Մատթ., Ե, 4): Սողոմոնը նույնպես [ասում է]. «Իմաստունի սիրտը սգո տանն է, իսկ հիմարի սիրտը՝ ուրախության տանը» (ԺՈՂ., Է, 5):

Ութերորդ՝ որովհետեւ ուռենին ուրիշ ծառերի նման ավելի չի երկարում, նույնպես եւ նրանք, ովքեր Քրիստոսին են հետեւում, չպետք է մտածեն երկարակեցության մասին եւ արդար վճիռը, որ է՝ մահը մոռանան, այլ [պետք է] միշտ սպասեն մահվան, ինչպես Դավիթն է ասում. «Երանի այն մարդուն, որի օգնությունը Քեզնից է, եւ որը մտքում դրեց ելնել տրտմության հովտից» (Սաղմ., ՁԳ, 6, 7)»:

Նշենք, որ հույժ խրախուսելի է, երբ հավատացյալներն իրենք եւս մասնավոր օրհնության համար ուռենու ոստեր են բերում Ս. եկեղեցի:

Ասենք նաեւ, որ խոտելի է, երբ տաճարում գտնվողները ճյուղեր ստանալու համար իրենց անհամբերությամբ, աղմուկով ու անպատշաճ պահվածքով իրարանցում են առաջացնում՝ եկեղեցու անդորրը խախտելով եւ աղոթալից մթնոլորտը խափանելով:

Արդ, քանի որ մենք Տիրոջ սիրով ու երկյուղով դաստիարակված հավատացյալներ ենք եւ մանավանդ որ Ս. եկեղեցում ենք գտնվում, որտեղ հանապազ անճառելիորեն ներգործում է Սուրբ Հոգին, ուստի պետք է բարեպաշտությամբ ու ամենայն ակնածանքով մոտենանք Ս. եկեղեցու ծառայողին՝ մեզ հասանելիք ոստը վերցնելու, եւ առանց շտապելու ու իրար հրմշտելու՝ դուրս ելնենք Աստծո տաճարից:

Եկեղեցում նման արժանավայել վարքի ու վարվելակերպի համար Տերը մեզ կրկնակի օրհնությամբ կօրհնի՝ ի փառս Ամենասուրբ Երրորդության:

*Արթուր դպիր ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
*Գեւորգյան հոգեւոր ճեմարանի*
*Դ լսարանի սան*

## ՔԱՐՈԶՉԱԿԱՆԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

# «ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ»




Տոնախոսական թերթոնների հրատարակության նորամուտ ավանդությանը հավատարիմ՝ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնը Սուրբ Հարության տոնի նախօրյակին լույս ընծայեց համապատասխան թերթոնը՝ 30 հազար տպաքանակով (տեքստի հեղինակ՝ Վիգեն սրկ. Ղազարյան, ձեւավորումը՝ Ռուբեն Գրիգորյանի): Այն ընդգրկում է Զատկին նախորդող Ավագ շաբաթը եւ բուն Հարության տոնը ներկայացնող անհրաժեշտ կրոնական եւ արարողական գիտելիքներ, շարադրված է հանրամատչելի լեզվով, որպեսզի հասկանալի լինի բոլոր ընթերցողների համար: Թերթոնները կուղարկվեն բոլոր թեմեր եւ կբաժանվեն եկեղեցի եկող հավատացյալներին:

# ՂԱԶԱՐՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ղազարոսի հարությունը նախորդում է Ծաղկազարդի կիրակիին եւ իր այլաբանական խորհրդով կապվում է Ավագ շաբաթվա հետ:

Ավետարանները պատմում են, թե Հիսուս նախ մարդկային մարմնի տարբեր անդամները բժշկեց՝ գոսացած ձեռքը, բորոտությունը, կուրությունը, ապա նոր Ղազարոսին հարություն տվեց:

Ղազարոսը Հիսուսի մտերիմ բարեկամն էր, որը ապրում էր Բեթանիայում եւ հիվանդ էր. «Եւ մի հիվանդ կար, Ղազարոս անունով, Բեթանիայից՝ Մարիամի եւ նրա քույր Մարթայի գյուղից» (Հովհ., ԺԱ, 17-45): Սա այն Մարիամն էր, որ յուղով օծեց Տիրոջը եւ իր մազերով մաքրեց Նրա ոտքերը:

Ըստ մեկնիչների՝ **Բեթանիա** թարգմանաբար նշանակում է **սգի տուն**, եւ խորհրդանշում է աշխարհը, որը Ադամի մեղքից հետո դարձել էր սգի տուն: Երկու քույրերը խորհրդանշում են այն մարգարեներին ու նահապետներին, որոնք սգալով Ադամի վրա՝ նրա գործած մեղքի համար փրկություն են հայցում Քրիստոսից, իսկ Ղազարոսի հիվանդանալն էլ, ադամական մեղքով, մարդկային բնության ուրանալն էր խորհրդանշում, որը կարող էր բուժել միայն Քրիստոս:



Ղազարոսի հիվանդության լուրը լսելով՝ Քրիստոս չի շտապում այնտեղ, քանզի «Այդ հիվանդությունը մահաբեր չէ, այլ Աստծու փառքի համար է, որպեսզի դրանով Աստծու Որդին փառավորվի»:

Երբ Հիսուս գալիս է Բեթանիա, Ղազարոսն արդեն վախճանվել էր: Նրա քույրերը սգում էին՝ ասելով. «Տե՛ր, եթե դու այստեղ եղած լինեիր, մեր եղբայրը մեռած չէր լինի»: Այս խոսքերը պատահական չեն, այլ խորհրդանշում են, որ որտեղ մուտք գործեց կենդանությունը՝ Քրիստոս, այնտեղ մահը մուտք չի գործում: Եթե Քրիստոսից առաջ մեղքով էր ծանրացել մարդկանց հոգիները, ապա Քրիստոս հարությամբ ցույց տվեց, որ հեզ ու խոնարհ հոգիները կազատվեն մահվան կապանքներից: Այն մարդիկ, ովքեր հավատում են Քրիստոսին, նրանք փրկված են:

Ղազարոսի աճյունը դրված էր մի քարայրում, եւ Հիսուս «Այդ քարը մի կողմ դրեք» խոսքով ասում է, թե մի կողմ թողեք ձեր անհավատությունը եւ ճշմարիտ հավատքի եկեք:

Եւ Քրիստոսի հրաշագործ զորությամբ հարութուն առավ մեռյալ Ղազարոսը.

***Հնչում է ձայնը կենսապարգեւի՝***
***Դո՛ւրս արի, Ղազա՜ր:***
***Եւ դուրս է գալիս մեռյալն, ավետիս...***
***(Սուրբ Գրիգոր Նարեկացի, «Հարություն Ղազարի):***

Ղազարոսի մահվան լուրը «մահվան լուր» չէր, այլ հարության ավետիս, մահվան խորտակում եւ կենդանության շնորհ, եւ նրա հարությունը Քրիստոսի հարության նախօրինակն էր:

***Վարդան ԲԱՂՈՒՄՅԱՆ***
***«Ս. Ներսես Շնորհալի»***
***կիրակնօրյա վարժարանի սան***

# ՅԱՆ ՇՏՈՒԿԱՅԻ «ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ» ԿՏԱՎԸ

## *60 մետր երկարությամբ հսկա պաստառը քառասուն տարի կորած էր համարվում*

Արվեստի գործերը եւս ունենում են իրենց ճակատագիրը: Ինչպես եւ մարդկանց ճակատագրերը, դրանք լինում են տարբեր, հաճախ նաեւ՝ դրամատիկ: Այդպիսի մի կտավ է հայտնի լեհ նկարիչ Յան Շտուկայի «Խաչելություն» մեծածավալ ստեղծագործությունը:

Մի քանի խոսք նկարչի մասին:

Յան Շտուկան ծնվել է 1858 թ. Լեհաստանի Լեմբերգ քաղաքում: Վիեննայի գեղարվեստի ակադեմիան ավարտել է 1877 թ.՝ աշակերտելով Յան Մատեշկոյին: Այնուհետեւ տեղափոխվել է Փարիզ: 1886-ից ցուցադրվել է ֆրանսիացի նկարիչների ամենամյա սալոններում: Նրա ստեղծագործությունները ցուցադրվում են աշխարհի տարբեր թանգարաններում՝ Վատիկանում (45 կտավ՝ Քրիստոսի կյանքին նվիրված), Վարշավայի եւ Պոզնանի թանգարաններում: Կապրիի թանգարանում է ցուցադրվում նրա «Յո երթաս» 15 նկարից կազմված շարքը:

Տաղանդավոր նկարիչը հայտնի է նաեւ որպես պոետ ու գրող: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նրա նամակագրությունը Լեւ Տոլստոյի հետ:

Հայտնի նկարներից են «Գողգոթան», «Տիրամայրն օրհնում է լեհ ժողովրդին», «Յո երթաս» շարքը եւ այլն:

Յան Շտուկան մահացել է 1925 թ. Հռոմում:

1894 թ. Լեհաստանի Լեմբերգ քաղաքում երիտասարդ երաժիշտ Իգնաս Պադերեւսկին հմայված կանգնած էր Յան Շտուկայի մի հսկա կտավի առջեւ, որը պատկերում էր մեկ դար առաջ լեհ ժողովրդի ազատագրական պայքարը Ռուսաստանի դեմ: Ծնված լինելով ռուսների ու գերմանացիների կողմից ստրկացված Լեհաստանում՝ Իգնաս Պադերեւսկին խորը ապրումներ ունեցավ: Կտավը նրան երկյուղածություն ու ակնածանք ներշնչեց, քանզի նրա համար «ազատությունը» ուներ բացառիկ իմաստ:

Իր կտավն ստեղծելուց առաջ նկարիչը մի ուխտագնացություն ձեռնարկեց դեպի սուրբ երկիր: Երուսաղեմում զգաց, որ, ասես, ընկել է Քրիստոսի ապրած ժամանակաշրջանը: Պատմությունը, կարծես, ետ էր վերադառնում՝ նրան շատ իրական պատկերացում տալով ամբողջ տեսարանի մասին: Ու նկարչի հոգում վերակենդանացավ խաչելության զարհուրելի տեսարանը: Երկյուղածությամբ ու ակնածանքով նա ճեպանկարներ էր անում:

Ետդարձի ճանապարհին նա կանգ առավ Հռոմում, եւ Լեո 13-րդ պապն օրհնեց նրա ներկապնակը: Միաժամանակ նկարչի պատվերով մի հսկա կտավ (13,7 մ լայնք եւ 59,4 մ երկարություն) պատրաստվեց եւ ուղարկվեց Լեհաստան՝ Լեմբերգ, ուր քաղաքի ղեկավարությունը, որպես արվեստանոց, մի մեծ շինություն էր տրամադրել նրան:

Հաջորդող երկար տարիների ընթացքում շատ քիչ բան էր խոսվում Յան Շտուկայի մասին, քանի դեռ նա օրական 12-14 ժամ անընդմեջ աշխատում էր նկարի վրա: Վերջապես գործն ավարտվում է:

Նկարի ցուցադրությունը ցնցեց ողջ Եվրոպայով մեկ՝ որպես դարի կրոնական ու արվեստի ամենանշանակալի իրադարձություն: «Խաչելությունը» տեսնելու էին գալիս աշխարհի չորս ծագերից: Դարեր շարունակ հավատացյալ նկարիչները պատկերել են Քրիստոսին խաչի վրա, բայց Շտուկայի հանճարն ընդգրկեց մի ավելի դրամատիկ պահ՝ սպասումի պահը խաչելությունից անմիջապես առաջ:

Հսկա, բազմաֆիգուր կոմպոզիցիայում առանձնանում է կենտրոնական մասը, ուր տեղի են ունենում գործողությունները: Թեեւ երկնքից կախված են մութ-մութ ամպեր, նկարի այս հատվածը խաղաղ լուսավորված է, եւ դիտողը կարող է պարզ տեսնել, զգալ յուրաքանչյուրի հոգեվիճակը:

Այս լուսավոր հատվածում տեսնում ծանակեցին: Նրա դեմքը խաղաղ է. կանգնած նայում է երկնքի Իր Հորը եւ ուժ խնդրում՝ խաչի փորձությանը դիմանալու համար:

1904 թ. Շտուկան նկարը տարավ Ամերիկա՝ հույս ունենալով այն ցուցադրել Սեն Լուիս ցուցասրահում, բայց դժբախտաբար չկարողացավ հսկա կտավը ցուցադրելու համար տարածք գտնել: Շուտով նրան սկսեցին ճնշել տարբեր տեսակի հարկերն ու պարտավորությունները: Եւ որքան էլ անհավատալի թվա, նկարը, որ կարծես նկարչի անբաժանելի մասն էր դարձել, անցավ ուրիշների ձեռքը:

Հուսախաբված ու ճնշված նկարիչը վերադարձավ Լեհաստան ու այլեւս երբեք չգտավ իր ստեղծագործությունը:

Նկարի նոր տերերն ավելի հաջողակ չէին, քանի որ նրանք եւս հաջողության չհասան այն ցուցադրելու մեջ: Մի շարք անհաջող փորձերից հետո նկարը փաթեթավորվեց եւ տեղադրվեց մի պահոցում, ու այն կորած էր համարվում աշխարհի համար: Կորած... մինչեւ որ նրա գոյության լուրը հասավ դոկտոր Հյուբերթ Իթընին՝ Կալիֆորնիայի Գլենդեյլ քաղաքի Ֆորեստ Լոն հուշահամալիրի հիմնադրին:

Այդ լուրերը նրան մարգարեական թվացին, քանի որ նա հուշահամալիրի հուշարձանների խորհրդի հետ արդեն ձեռնարկել էր հերկուլեսյան մի խնդիր, այն է՝ մեծ արվեստի միջոցով ներկայացնել Քրիստոսի կյանքի երեք ամենադրամատիկ ու հանգուցային պահերը: Սրանցից առաջինը՝ «Խորհրդավոր ընթրիքը», արդեն իրագործվել էր ապակեպատկեր պատուհանի ձեւով (վիտրաժ):

Հիմա հերթը հասել էր երկրորդ պահին՝ Խաչելությանը: Երկար որոնումներից հետո դոկտոր Իթընին հաջողվեց 1944 թ. գտնել եւ գնել նկարը: Նա կտավը բերեց Լոս Անջելես, եւ հոգաբարձուների խորհուրդը միաձայն որոշեց ցուցադրել: Որոշվեց նաեւ մի հատուկ շենք կառուցել, ուր կկարողանան ապահով ու ողջ վեհությամբ ներկայացնել:



*«Խաչելություն» կտավի կենտրոնական հատվածը (1/3-րդ մասը)*

Այս զգացմունքներից բորբոքված երիտասարդ Պադերեւսկին մի միտք հղացավ. ստեղծել մի նկար, որն ավելի շատ բան կասեր, քան մի երկրի անվերջ պայքարն է ազատության համար: Նրա պատկերացմամբ՝ այդ նկարը պետք է վեր հաներ ազատության այն թաքնված սկզբնաղբյուրը, որ շնորհվեց մարդկանց՝ Քրիստոսի զոհաբերությամբ խաչի վրա:

Պարուրված այս գաղափարով՝ նա գնաց արդեն հայտնի նկարիչ Յան Շտուկայի մոտ, պատմեց ամեն բան եւ... Շտուկայի համար եւս այս մտահղացումը վերածվեց մի հետապնդող մտքի, որը պիտի դառնար նրա ստեղծագործական կյանքի կիզակետը:

Նա անմիջապես սկսեց ծրագրել «Խաչելությունը»՝ հսկա չափերով, դրամատիկ ոգով, այն պետք է ստեղծվեր միանգամից եւ մեկընդմիշտ դիտողին հասցներ խաչելության մեծ դասը:

ենք Քրիստոսի մտերիմներին ու համակիրներին. Տիրամայրը, այդ օրհասական պահին զսպելով վիշտը, փորձում է իր պահվածքով մխիթարել որդուն: Նրա հետ են Հիսուսի սիրած աշակերտ Հովհաննեսը, Ղազարոսը, Մարթան՝ Ղազարոսի քույրը: Մի փոքր հեռու ծնկաչոք Մարիամ Մագդաղինացին է՝ աղոթքի պահին:

Իսկ նրանք, ովքեր չեն ընդունել Քրիստոսի ուսմունքը, նկարչի նուրբ իմաստությամբ մնացել են ամպերի ստվերում: Այստեղ են Աննասը եւ Քալիֆասը, որ կաշառեցին Հուդային ու դրդեցին մատնության:

Կարելի է երկար խոսել այս հսկա կոմպոզիցիայի մասին, բայց ուզում ենք անդրադառնալ Հիսուսի կերպարին, որն այդ ամբողջ իրարանցման մեջ միայնակ կանգնած է կենտրոնում՝ խաչի կողքին, ոտքերի մոտ՝ պարանը, փշե պսակը եւ եղեգնը, որոնցով նրան

Նկարի ցուցադրման նպատակը Հյուբերթ Իթընը համարում էր այն, որ դիտողները կարողանան նայել իրենց հոգու խորքը եւ կարեւորեն խաչելության իմաստը, որ քրիստոնեության հիմքն է: Բոլորը, ովքեր այցելում են խաչելության եւ հարության սրահը, կարողանան կյանքը շարունակել նորոգված հոգով ու հավատքով՝ առաջնորդվելով հետեւյալ խոսքերով. «Տեր Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդին տվեց, որ ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ., Գ, 16):

***Վեհանուշ ՓՈՒՆԱՐՋՅԱՆ***
*Հայաստանի ազգային պատկերասրահ*

# *ԽԱՉՔԱՐԵՐ, ԽԱՉՔԱՐԵՐ ՀԱՅՈՑ*

Խաչքարերը, սովորաբար, համարվում են հայ միջնադարյան արվեստի ինքնատիպ (զուտ հայկական) ստեղծագործություններ: Հանրագիտարանային ձեւակերպմամբ՝ խաչքարը «հայկական միջնադարյան մշակույթին բնորոշ կոթող հուշարձան է՝ արեւմտյան ճակատին խաչի պատկերով, զարդաքանդակների հորինվածքով» (ՀՍՀ, հ. 5, էջ 29):

Ողջ պատմական Հայաստանի տարածքում հարդարանքով երբեք իրար չկրկնող շուրջ 15 հազար միջնադարյան խաչքար է հայտնի: Քարի վրա փորագրված խաչ ունեն նաեւ այլ քրիստոնյա ժողովուրդները, բայց այն նրանց մոտ եզակի բնույթ է կրում եւ չունի կրոնամշակութային այնպիսի կիրառություն, ինչպիսին հայոց մեջ:



*«Ամենափրկիչ» խաչքարը՝ 1279 թ.*
*(Ս. Էջմիածնի վանքի բակում)*

Խաչքարերը նախ եւ առաջ քրիստոնեական կրոնի ծնունդ են, հավատացյալ մարդկանց աստվածպաշտական ու բարեպաշտական զգացումների նյութեղեն արտահայտությունը: Դրանք երեւան են եկել ոչ թե որպես արվեստի գործեր, այլ հավատի ու հույսի կոթողներ: Խաչքարի վրա եղած բուն քանդակը Հիսուսի խաչելության պատկերագրական տեսարանի խորհրդանշական վերարտադրությունն է: Պատահական չէ, որ խաչի տակ քանդակվում է եռաստիճան բրգաձեւ գետնախարիսխ (ստիլոբատ), որ խորհրդանշում է Գողգոթան, իսկ խաչի վերնամասում՝ աջ ու ձախ կողմերում, պատկերվում են արեւն ու լուսինը, ինչպես որ արվում է խաչելության մանրանկարներում: «Գողգոթայի» ստորոտում երբեմն քանդակված է լինում ադամագանգը (ինչպես որ այն պատկերվում է մանրանկարներում): Երբեմն խաչքարի կենտրոնական խոշոր խաչի երկու կողմերում քանդակված են երկու փոքր խաչեր, որոնք ներկայացնում են Հիսուսի հետ խաչված երկու ավազակների խաչերը: Կան մի քանի նշանավոր խաչքարեր, որոնց խաչի վրա պատկերված է խաչից իջեցվող Հիսուսը: Այդպիսի խաչքարերը կոչվում են «Ամենափրկիչ»:

Խաչքարերի զարդային համակարգը եւս հիմնականում խորհրդապատկերներ է ներկայացնում, սակայն դրանց հանգամանալից ներկայացումն այստեղ մեր նպատակից դուրս է (այս մասին տե՛ս Ա. Շահինյան, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձաններ. 9-13-րդ դարերի խաչքարերը, Երեւան, 1984): Ընդգծենք միայն, որ խաչքարերն սկզբնապես գերեզմանաքար չեն եղել: Դրանք կանգնեցվել են թե՛ մահացած եւ թե՛ կենդանի մարդկանց հոգու փրկության համար:

Հայտնի են նաեւ բազմաթիվ խաչքարեր, որոնք կանգնեցվել են որեւէ նշանավոր իրադարձության առիթով: Օրինակ, Զաքարե ամիրսպասալարը, Ամբերդը սելջուկներից ազատագրելու առիթով, խաչքար է կանգնեցրել: Իսկ Կոշի Պետրոս վարդապետը մի տեսիլք է ունեցել երկրամասի սելջուկներից ազատագրվելու մասին, եւ երբ դրանից քսան տարի անց տեսիլքն իրականություն է դարձել, նա այդ կապակցությամբ մի խոշոր խաչքար է կանգնեցրել: Ժամանակակիցները Պետրոս վարդապետին «Ականատես» մականունն են տվել (խաչքարը գտնվում է Երեւան-Գյումրի ավտոմայրուղու եզրին՝ Կոշ գյուղի մոտ): Վայոց ձորի Մարտիրոս գյուղում այժմ էլ կանգուն է 1283 թ. մի խաչքար, որը վկայում է գյուղի հիմնադրման մասին:

Խաչքարերի հետ կապված բազմաթիվ ավանդություններ են պահպանվել: Գագ բերդում եղել է մի հրաշագործ խաչքար, որն ավանդաբար վերագրվել է Ս. Մեսրոպ Մաշտոցին:

Խաչքարերի վրա գրված վիմագիր արձանագրություններն արժեքավոր պատմական սկզբնաղբյուրներ են, նրանց քանդակները՝ կերպարվեստի հրաշալի ստեղծագործություններ: Խաչքարը քրիստոնեական հավատը խորհրդանշող կոթող է: Չէ՞ որ խաչի խորհրդի մեջ է բյուրեղացած Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի գերագույն նպատակը՝ ինքնազոհաբերությամբ դառնալ Քավիչը մարդկային մեղքերի եւ Փրկիչը համայն մարդկության: Հետեւաբար, խաչքար կանգնեցնող ամեն մարդ առաջին հերթին այս փրկչական խորհուրդն է արծարծել:

Խաչքարային ավանդույթն իրողություն է նաեւ արդի Հայաստանում, սակայն, հիմնականում «խաչքարային արվեստի» ենթատեքստում:

***Կարեն ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

# ՀԱՎԱՔ-ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹԵՄԵՐԻ ՔԴԿ-ՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Սկիզբը՝ էջ 2*

Սյունյաց թեմի ՔԴԿ-ի գործունեության շրջանակում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ուխտագնացություններին: Նպատակադրվել են մինչեւ 2001 թվականը կիրակնօրյաների սաների հետ այցելել շրջանի բոլոր լքված եկեղեցիները եւ տեղեկություններ հավաքել, միաժամանակ կկազմակերպվեն եկեղեցիների մաքրման աշխատանքներ: Քարոզչական աշխատանք է կատարվում նաեւ երկու մանկապարտեզում:

Կոտայքի թեմում օրինակելի է մասնագիտական դպրոցների ծրագրում հոգեւոր դասերի հավելումը:

Գուգարաց, Կոտայքի եւ Արմավիրի թեմերի ՔԴԿ-ների պատասխանատուներն առաջ քաշեցին ՔԴԿ-ի կառուցվածքին, կիրակնօրյաների ուսումնամեթոդական խնդիրների կարգավորմանն ու բյուջեի ձեւավորմանն առնչվող հարցեր՝ ներկայացնելով որոշակի առաջարկներ:

ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրեն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը ելույթների եւ առաջարկությունների վերաբերյալ հայտնեց հետեւյալ տեսակետը:

Նախ առաջարկեց, որ թեմի ՔԴԿ-ն ունենա մեկ պատասխանատու (ցանկալի է՝ հոգեւորական) եւ նվազագույնը՝ երկու օգնական: Մեկը՝ ընդհանուր գործավարությունը կազմակերպելու, մյուսը՝ մանկավարժական, քրիստոնեական դաստիարակության ամբողջ ոլորտը ղեկավարելու համար: Վերջինը կարող է թեմի տարածքում ստեղծել մասնագետների խումբ՝ տեսչական գործունեության համար, ովքեր կրթական ծրագրերը կիրականացնեն տվյալ քաղաքի եւ նրա շրջակայքի դպրոցներում՝ աշխատանքները համաձայնեցնելով տեղի՝ կրթության գծով պետական պատասխանատուի հետ: Մասնագետների այս խումբը կարող է աշխատել հասարակական կարգով:

Բանախոսը նշեց, որ ՔԴԿ-ի գործունեության ծրագիրը պետք է կազմեն տվյալ թեմի առաջնորդը եւ ՔԴԿ-ի պատասխանատուն: Կազմված ծրագրի սահմաններում էլ հաստատեն բյուջեն: Իսկ ՔԴԿ-ի կանոնադրությունը պետք է կազմեն՝ ելնելով թեմի կանոնադրության համապատասխան դրույթներից:

ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրենը թեմերի ՔԴԿ-ների պատասխանատուներին առաջարկեց մեկ շաբաթվա ընթացքում գրավոր ներկայացնել վերը նշված 9 կետերի պատասխանները, գործունեության տեղեկագիրը՝ ՔԴԿ-ի ստեղծման օրից սկսած, առաջիկա մեկ տարվա գործունեության նախահաշիվը եւ աշխատանքների արդյունավետ կազմակերպմանն անհրաժեշտ բոլոր կարիքները: Նաեւ՝ յուրաքանչյուր կիսամյակին գործունեության եւ ֆինանսական հաշվետվություն ներկայացնել թեմակալ առաջնորդներին եւ ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրենին:

Հավաքին ներկա գտնվեց նաեւ «Քրիստոնեայ Հայաստան» թերթի գլխ. խմբագիր Կարեն Մաթեւոսյանը: Նա, դիմելով ներկաներին, ասաց, որ ցանկալի է աշխուժացնել ՔԴԿ-ների կապը թերթի հետ: Որպեսզի թերթն իրապես դառնա կապող օղակ բոլոր թեմերի միջեւ, ՔԴԿ-ները պետք է աշխատեն թեմական կյանքի վերաբերյալ լրատվությունը ժամանակին հաղորդել թերթին:

Իր բնույթով առաջին այս հավաք-հանդիպումը խոստումնալից էր՝ թեմերում քարոզչական աշխատանքը համակարգված ու առավել նպատակային կազմակերպելու առումով:

***Աննա ԱԼՈՅԱՆ***

# «ԷՋՄԻԱԾԻՆ», 1999, ՀՈՒՆՎԱՐ

Լույս է տեսել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական «Էջմիածին» ամսագրի 1999 թ. Ա համարը: Այն սկսվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինի Ս. Ծննդյան պատգամով: Այնուհետեւ, որպես տարեմուտի շնորհավորանք, խմբագրությունը հետաքրքիր լուծում է գտել՝ զետեղելով ուղիղ 100 տարի առաջ՝ 1899-ին, «Արարատ» ամսագրում լույս տեսած, Գարեգին վրդ. Հովսեփյանի (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս) հեղինակած ամանորյա խմբագրականը, որին հաջորդում է «Հարյուր տարի անց. Նոր տարի, հին մարտահրավերներ» խմբագրականը:

Համարում տեղ են գտել պաշտոնական նյութեր, կաթողիկոսական կոնդակներ, Մայր Աթոռի եկեղեցաշինարարական իրադարձություններին վերաբերող հրապարակումներ, քարոզներ, բարոյախրատական, պատմաբանասիրական, լայն ընդգրկմամբ տեղեկատվական ու այլ նյութեր:

# ՀՈԳԵՒՈՐ ՋԵՐՄ ՄԹՆՈԼՈՐՏ

*Մեծ պահքի օրերն են Հայոց եկեղեցիներում: Հոգեւոր մթնոլորտ է նաեւ կիրակնօրյա վարժարաններում: Դաշտավորաց կիրակին միասին անցկացրին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եւ «Ս. Մարիամ Աստվածածին» կիրակնօրյա վարժարանների ավագ խմբերի սաները: Հանդիպման նպատակը մերձեցումն էր, միասնաբար աղոթելը, սիրո սեղանը: Այն սկսվեց «Հայր մերով»: Վարժարանների սաները սիրով ներկայացնում էին միմյանց, պատասխանում կրակարանյան թեմաներով հարցերի, հարցեր ուղղում միմյանց, պատրանեկան խանդավառությամբ փորձում գտնել կյանքի, սիրո, երջանկության առեղծվածը:*

*Որպես կրոնի ուսուցիչ՝ ապրում եմ այն թերկրանքը, հերս հեչ համար անում հայրենություն, որ այսօր սրտացած հոգեւոր գիտելիքը վաղը կդառնա նրանց աշխարհայացքի հիմքը: Այս փաստությունն իրենք են ներշնչում. անգամ ընդհանուր բնույթի հարցերին փորձում են պատասխանել ավետարանական ճշմարտությամբ: Իսկ որպես սիրած երգ՝ հրամցնում են այն շարականները, որ սովորել են երգչախմբերում: Ուրեմն, ինչպես չասել՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ...»:*

*Աղոթքն ու շարականը դարձան երեխաների հոգեկան մերձեցման բանալի: Նրանք դահլիճից հեռացան անմոռաց հիշողություններով՝ փանելով իրենց սիրելի վարդապետ՝ ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրեն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի օրհնանքը:*

*Այդ գեղեցիկ միջոցառման նախաձեռնողները Հոգեւոր ճեմարանի 4-րդ լսարանի ուսանողներն էին՝ Գեւորգ Հովհաննիսյանը, Արկադի Թանդիլյանը եւ Արմեն Պետրոսյանը: Շնորհակալություն, սիրելի՛ ճեմարանցիներ, թող այս առաջին քայլերը դառնան ձեր հոգեւոր գործի նախաշավիղը:*

***Սուսաննա ՄՆՈՅԱՆ***

# ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՖՐԵԶՆՈՅՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻՆ

Ֆրեզնոյի Սուրբ Պողոս հայկական եկեղեցու եւ Թեքեյան մշակութային միության նախաձեռնությամբ եկեղեցու Բերբերյան սրահում հունվարի 16-ին բացվել էր երեք հայ գեղանկարչի ստեղծագործությունների ցուցահանդես՝ նվիրված քրիստոնեության ընդունման 1700-ամյակին: Ցուցադրվում էին Աշոտ Մելքոնյանի, Ռաֆայել Աթոյանի եւ Հազդրուբալ Արամունու (առաջին երկուսն ապրում են Ամերիկայում, Արամունին էջմիածին քաղաքի բնակիչ է) կտավները: Ասենք, որ Ֆրեզնոյում հայերը բնակություն են հաստատել 1880-ական թվականներից, եւ այսօր քաղաքում, իր շրջակա բնակավայրերի հետ (Ռիդլի, Սելմա, Թուլեր, Եդեմ եւ այլն), ապրում է ավելի քան 60 հազար հայ: 1900 թվականին քաղաքում հիմնվել է հայ առաջին առաքելական եկեղեցին: Սուրբ Պողոսը հիմնադրվել է 1943-ին: Ֆրեզնոյում կա երկու գեղարվեստական սրահ... pեզմանատուն, որտեղ ամփոփված են Սողոմոն Թեհլերյանի, Վիլյամ Սարոյանի եւ հայ մի շարք երեւելիների աճյունները:

Ցուցահանդեսի բացման առիթով բարեմաղթանքի խոսք ասաց հոգեշնորհ Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը: Կազմակերպիչներին շնորհակալական խոսք ուղղեցին ինչպես նկարիչները, այնպես էլ այցելուներից: Հետաքրքրությամբ էին դիտվում էջմիածնեցի, Հայաստանի նկարիչների միության անդամ Հազդրուբալ Արամունու 16 ստեղծագործությունները: Նկարչի շատ գործեր այսօր տեղ են գտել Կանադայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում եւ այլ երկրներում ապրող հայերի եւ օտարերկրացիների հավաքածուներում. դրանցից շատերը եղել են նվիրատվություններ: Ֆրեզնոյի Ս. Պողոս եկեղեցուն եւս նկարիչը նվիրեց իր կտավներից մեկը:

***Անդրանիկ ՏԵՐՏԵՐՅԱՆ***

# ԳՐԱԿԱՆ ՍՅՈՒՆԱԿ

## ԳԵԹՍԵՄԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

*«Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը թող ինձանից հեռու անցնի, բայց ոչ ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես Դու» (Մատթ., ԻԶ, 29):*

Դաժան կյանքի պատարագման սկիհը ձեռքին  
Անեղծ բնության գիշերային անդորրի մեջ  
Ալեկոծված սրտի տրոփյունով եւ հոգով մրրկահույզ  
Անցնում էր Նա Գեթսեմանի ճանապարհով:

Երկարել էր ճանապարհն այդ, օրն՝ առավել,  
Կարծես կյանքի ընթացք լիներ բազմաբավիղ,  
Հասնել այնտեղ, ուր Իր Հոգու առվակները պիտի հոսեր  
Հոր ստեղծած բնության մեջ, ի տես Նրա...

Մտորալից գնում էր Նա զոհասեղան,  
Հավատարիմ Իր սուրբ ուխտին՝ Հոր հետ կնքած,  
Խոնարհությամբ ծնրադրելու Նրա Փառքի  
Եւ Զորության առաջ անմար...

Ի՞նչն էր արդյոք ալեկոծել Նրա Հոգին աստվածային,  
Որ ապրել էր տառապալից կյա՞նք մարդկային,  
Որ անցել էր դժոխային այդ կապանո՞վ...  
Բայց չէ՛ր խամրել գթությունը Նրա Հոգում:

Ու սփռելով ամենուրեք Սերն Իր անծիր՝  
Անցնում էր Նա ճանապարհով Գեթսեմանի,  
Որ տանում էր խաղ ու շիրմի հանգրվանն Իր,  
Որ անտրտունջ, ի սեր մարդկանց,  
Պիտի կրեր Իր ուսերին:

***Զարեհ աբեղա ԿԱԲԱՂՅԱՆ***

# ՊԱՏՈՒՄ

## *Ի՞նչ նպատակով են մարդուն տրվում շնորհները՝ գործածելո՞ւ, թե՞...*

Մի մեծահարուստ, չցանկանալով օգտագործել իր ունեցվածքը, միայն դրա արտաքինով ուրախանալու, հրճվելու մտայնությամբ՝ տանում եւ ամբողջ հարստությունը թաղում է իր պարտեզի ծառերից մեկի տակ: Ամեն առավոտ ջանադրաբար այցելում է նշված վայրը՝ «գանձերին տեսության»:

Օգնության խնդրանքով իրեն դիմողներից ոչ մեկին չի աջակցում, մերժում է օժանդակել անգամ հիվանդանոցի, դպրոցի, եկեղեցու բարեկարգմանը: Մի օր, երբ ցանկանում է դեղին մետաղից «ճառագող» հանույքը վայելել, քանդում-հանում է ոսկու արկղը: Սակայն չափազանց մեծ է լինում նրա հիասթափությունը, երբ արկղում ոսկու փոխարեն տեսնում է քարերի կույտ: Նրա բարձրացրած լացուկոծից դուրս են գալիս բոլոր դրացիները: Մեկը, իբրեւ մխիթարություն, ասում է. «Ի՞նչ տարբերություն՝ արկղում քա՞ր է, թե՞ ոսկի: Չէ՞ որ չէիր գործածում...»:

# ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ

## ԲԱՌԱՇՂԹԱՅԻ ՄԻՋՆԱՏՈՂՈՒՄ ՆՇՎԱԾ Է ԱՅՆ, ԻՆՉՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀԱՏԿԱՊԵՍ ՊԱՀՈՑ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Զիթապտղի բույս: 2. Նոյան ...: 3. Վանք Վայոց ձորում: 4. Սարկավագի օգտագործած ծիսական առարկա: 5. Վառելափայտ: 6. Փորոտանի: 7. Առարկա, որ օգտագործվում է կենցաղում եւ ջրօրհնեքի ծեսի ժամանակ: 8. Քաղաք, որի մոտ է գտնվում պատմական Տիգրանակերտը: 9. Ուրարտական պետության մայրաքաղաքը: 10. Գրիգոր անվան թարգմանությունը հունարենից: 11. Պտուղ, որի պատկերն օգտագործվում է եկեղեցական քանդակագործության մեջ: 12. Քաղաք Ռուսաստանում: 13. Գյուղ Կոտայքի մարզում՝ Հրազդան գետի ափին: 14. Մահճակալի գլխի կողմը:




## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ**. 1. Բակլա: 2. Գանդի: 4. Բալզակ: 5. Երվանդ: 6. Աշոտ: 8. Նեմրութ: 10. Դոհր: 13. Իներցիա: 15. Եվրասիա: 16. Արթիկ: 17. Դարեհ: 18. Արաբո: 19. Իսլամ: 21. Ջառ: 22. Բել: 26. Հույներ: 30. Արամ: 31. Նշավակ: 32. Բերկրի: 33. Տրհո: 36. Արշակ: 37. Ամպեր:

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ**. 3. Բաբան: 6. Աբել: 7. Անի: 9. Վարդ: 11. Ադամյան: 12. Աստղիկ: 14. Դեկրետ: 17. Դյումա: 20. Արտազ: 22. Բրեստ: 23. Ավրորա: 24. Գայանե: 25. Կիթառ: 27. Լավաշ: 28. Հյուգո: 29. Ապարան: 32. Բաստիլ: 34. Շահնամե: 35. Մռավ: 36. Արա: 38. Կիտո: 39. Զաբել:

**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր**՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ**՝ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն

**Գլխավոր խմբագիր**՝ Կարեն Մաթեւոսյան

**Գրանցման վկայական**՝ 624, **Դասիչ**՝ 69333

**Խմբագրության հասցեն**՝ ք. Վաղարշապատ, Ս. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն

Հեռախոս՝ **(8+259) 56780**

***Արտատպություն կատարելիս հղումը «Քրիստոնեայ Հայաստանին» պարտադիր է:***

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

Ստորագրված է տպագրության 30. 03. 1999 թ.

**Տպաքանակը՝ 2000** **Գինը՝ 50 դրամ**

ԽՆԴՐՎՈՒՄ Է ԹԵՐԹԸ ՉՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ: ԿԱՐԴԱԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՅՆ ՏՎԵՔ ՄԵԿ ՈՒՐԻՇԻՆ: